



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 21(335) 20.11.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
241	«Ձմեռային գորակոչ անցկացնելու և գորացրում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-141-Ն հրամանագիրը.....	
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
242	«Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ԱՀ կառավարության N 114-Ն որոշումը.....	4
243	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 117-Ն որոշումը.....	6
244	«Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 461-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 118-Ն որոշումը.....	13
245	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 84 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 120-Ն որոշումը.....	26
246	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 121-Ն որոշումը.....	39
247	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի	

	Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 160-Ն որոշումը.....	42
248	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 26-ի N 19 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 161-Ն որոշումը.....	44
249	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 163-Ն որոշումը.....	57
250	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 164-Ն որոշումը.....	63
251	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 764-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 165-Ն որոշումը.....	65
252	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 765-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 166-Ն որոշումը.....	66
253	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու, Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 16-ի N 442 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 167-Ն որոշումը.....	67
254	«Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 733 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 168-Ն որոշումը.....	80
255	«Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի N 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 169-Ն որոշումը.....	90

256	«Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 24-ի N 162-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 170-Ն որոշումը.....	99
257	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ի N 522-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 171-Ն որոշումը..	100
258	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 101 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 173-Ն որոշումը.....	101
259	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 289 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 174-Ն որոշումը.....	107
260	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի N 128 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 175-Ն որոշումը..	108

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 նոյեմբերի 2017թ.

N 114-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ
«ՆՈՐԱԳՅՈՒԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, «Նախադպրոցական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ շաբաթական հնգօրյա և օրական ութժամյա տևողությամբ:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործառույթների իրականացումն է:

3. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե», «է» կետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմին:

4. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել՝

ա. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը,

բ. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավա-

րության 2007 թվականի մարտի 27-ի N 131 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, և այն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման.

2) ձևավորել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմինը և ապահովել նրա գործունեությունը:

5. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 09 բաժնի 1 խմբի 1 դասի «03 Նախադպրոցական հիմնարկներ» ծրագրով նախատեսված գումարից Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմին 2017 թվականին հատկացնել 6 614 400 (վեց միլիոն վեց հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 451100 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով)՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի «Նորագյուղի մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի պահպանման ծախսերն իրականացնելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 նոյեմբերի 2017թ.

N 117-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն, ՆՀ-107-Ն հրամանագրերին և 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**.

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման մեջ և որոշմամբ հաստատված հավելվածներում՝

1) «ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը՝ փոխարինել «ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն» բառերով՝ իր բոլոր համապատասխան հոլովածներով.

2) «ԼՂՀ էկոնոմիկայի նախարարություն» բառերը՝ փոխարինել «ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով՝ իր բոլոր համապատասխան հոլովածներով.

3) «ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն» բառերը՝ փոխարինել «ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և

զբոսաշրջության նախարարություն» բառերով՝ իր բոլոր համապատասխան հոլովաձևերով:

3. Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմին, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչության» առանձնացված ստորաբաժանմանը, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանը, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը, Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը ներկայացնել սույն որոշման ընդունումից բխող գնումների պլանները և (կամ) պլանների փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՈՒՍՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՐԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԼԵՈՒՍՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՐԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿՍՏԱՐԿՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՈՒՍՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՐԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ
N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿՍՏԱՐԿՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)				
Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
				Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ այլ թվում՝	
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(79,836.5)
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկադրույցային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	(79,836.5)
		1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	(79,836.5)
		03	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	(79,836.5)
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(242,660.3)
			ԱՀ պետական նախարարի աշխատակազմ	42,383.4
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	120,440.4
	6		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	
		1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	
		04	Կադաստրային գործերի արխիվի արդիականացում և կադաստրային փաստաթղթերի երկարաժամկետ պահպանման համար միջոցառումների իրականացում	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(201.2)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	201.2
		05	«Գեոդեզիայի, քարտեզագրման, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ծառայությունների գնման գծով պետական պատվեր	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(37,517.1)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթա-	37,517.1

			կառուցվածքների նախարարություն	
		06	Պետության կարիքների համար անշարժ գույքի վարձակալության և գույքի ձեռքբերման ծախսեր	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(15,710.5)
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	15,710.5
		07	ԼՂՀ ատլասի հրատարակում և թարգմանություն	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(6,675.0)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	6,675.0
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	56,387.4
	1		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	56,387.4
		1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	56,387.4
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	56,387.4
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	56,387.4
		04	Պետական աջակցություն «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամին	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(11,187.6)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	11,187.6
		07	Չգործող պետական ձեռնարկությունների գույքի պահպանման ծախսեր	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(4,362.2)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	4,362.2
		09	Պետական և համայնքային գույքի տեղեկատվության տրամադրման, հաշվառման, գույքագրման և գրանցման աշխատանքների իրականացում	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(10,303.6)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	10,303.6
		10	Պետական և համայնքային գույքի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացում	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(2,124.6)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	2,124.6
		11	Կանոնադրական կապիտալի և շրջանառու միջոցների ավելացում	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(90,000.0)
			ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	90,000.0
		12	Պետական աջակցություն «Սպասարկում» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	

			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(32,310.8)
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	32,310.8
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	
		2	Անտառային տնտեսություն	
			01 Պետական աջակցություն «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	
			ԼՂՀ կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	(75,489.3)
			ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն	75,489.3
			02 Գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումներ	
			ԼՂՀ կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	(3,680.0)
			ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն	3,680.0
			03 Կենդանական աշխարհի վերարտադրության միջոցառումների ծրագիր	
			ԼՂՀ կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	(1.4)
			ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն	1.4
	7		Այլ բնագավառներ	
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	
			01 Պատվիրակությունների ընդունելություններ	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(42,674.8)
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	42,674.8
		3	Զբոսաշրջություն	
			01 ԼՂՀ զբոսաշրջության զարգացման ծրագիր	
			ԼՂՀ էկոնոմիկայի նախարարություն	(13,815.0)
			ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն	13,815.0
	9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	
			01 Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	2,052.3
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	(2,052.3)
05			ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	
	6		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	

		1		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	
			01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	
				ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն	(48,411.6)
				ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն	48,411.6
08				ՀԱՆՊԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	12,862.1
	2			Մշակութային ծառայություններ	
		7		Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	
			01	Պետական աջակցություն «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	
				ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարություն	(25,496.0)
				ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն	25,496.0
			02	Հուշարձանների վերականգնման և պահպանման ծախսեր	
				ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարություն	(70,613.8)
				ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն	70,613.8
	6			Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	12,862.1
		1		Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	12,862.1
			01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	12,862.1
				ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն	12,862.1
09				ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	
	2			Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	
		1		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	
			01	Պետական աջակցություն ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին	
				ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	(40,892.8)
				Ստեփանակերտի քաղաքապետարան	40,892.8
	3			Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	
		2		Միջին մասնագիտական կրթություն	
			01	«Ստեփանակերտի Սայաթ -Նովայի անվան Էրաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթության գծով ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրում	

			ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	(34,343.2)
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	34,343.2
		03	«Ստեփանակերտի պարավետի քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	
			ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	(17,943.4)
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	17,943.4
5			Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	
	2		Լրացուցիչ կրթություն	
		01	Համայնքների ղեկավարների, պետական և քաղաքացիական ծառայողների ուսուցման ծրագրեր	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(18,792.5)
			ԱՀ պետական նախարարի աշխատակազմ	18,792.5
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	10,587.0
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	
		01	Վերաբնակիչների և փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(196,277.8)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	196,277.8
		05	Բնակարան վարձելու կամ ժամանակավոր կացարանով ապահովման նպատակով ֆինանսական օգնության տրամադրում	
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	(17,165.0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	17,165.0
9			Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	10,587.0
		1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	10,587.0
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	10,587.0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	10,587.0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա.ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 նոյեմբերի 2017թ.

N 118-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌՈՒԹՎԱԾՔԸ ՀԱՍՏՏԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 14-Ի N 461-Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ, 73-րդ հոդվածները և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**:

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 24-ի N442 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 24-ի N443 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N461-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՈՆԻՏԻՆԻՆԳՐՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կրթության, գիտության և սպորտի բնագավառներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Նախարարության անվանումն է՝

հայերեն՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն,

ռուսերեն՝ Министерство образования, науки и спорта Республики Арцах,

անգլերեն՝ Ministry of Education, Science and Sport of the Artsakh Republic:

6. Նախարարությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության անվանմամբ հայերեն կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Նախարարությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդականներից, մամուլի քարտուղարից, օգնականներից և ռեֆերենտներից, նախարարության աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

8. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝

1) բնակչության հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդումն, ազգային և համամարդկային արժեքների պահպանումն ու զարգացումը, կրթության, գիտության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման միասնական պետական քաղաքականության ռազմավարության մշակումն ու իրականացումը և դրա կենսագործման նկատմամբ վերահսկողությունը:

2) կրթության բնագավառի հենքը հանդիսացող ազգային դպրոցի գլխավոր նպատակի՝ մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորման ապահովումը:

3) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն.

4) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառների մասնագետների պատրաստումը և նրանց վերապատրաստման աշխատանքների կազմակերպումը.

5) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման, բնակչության առողջ ապրելակերպի ձևավորման և ակտիվ հանգստի կազմակերպման գործում.

6) բնակչության մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ինչպես նաև մասնագիտական զարգացման համար բարենպաստ ու հավասար պայմանների և հնարավորությունների ապահովումը, հաշմանդամների համար կրթությամբ, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու նպաստավոր պայմանների ստեղծումը.

7) պետական կրթական չափորոշիչներին կրթական ծրագրերի համապատասխանության ապահովումը.

8) ֆիզկուլտուրային և մարզական հանրապետական միջոցառումների անցկացումը.

9) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառների մասնագետների պատրաստման աջակցումը և նրանց վերապատրաստման աշխատանքների կազմակերպումը.

10) ուսումնական հաստատությունների, մարզական կառույցների ուսումնամեթոդական և ուսումնանյութական ապահովվածությանը նպաստելը.

11) հանրապետությունում տարբեր մարզաձևերի ազգային ֆեդերացիաների գործունեությանն ըստ ամենայնի աջակցելը.

12) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգերի գործունեության որակի ու արդյունավետության գնահատման, «Լեզվի մասին» Արցախի Հանրապետության օրենքի պահանջների կատարման ապահովումը.

13) ուսումնական, գիտական հաստատություններում և մարզական կառույցներում Արցախի Հանրապետության կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառների օրենսդրության նկատմամբ վերահսկողությունը, պետական քաղաքականության սկզբունքների պահպանումը:

II. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառների վերաբերյալ Արցախի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի ու այդ բնագավառներում Արցախի Հանրապետության պետական քաղաքականության մշակում.

2) կրթության և սպորտի զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակում, դրանց մոնիթորինգ և գնահատում.

3) կրթության և սպորտի բնագավառներում միջպետական համագործակցության ծրագրերի մշակում և դրանց իրականացման կազմակերպում.

4) կրթության, գիտության, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը սահմանված կարգով մասնակցություն.

5) դրսեկության ձևով հանրակրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կազմակերպման կարգի սահմանում.

6) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաների տրամադրում.

7) իր իրավասության սահմաններում լիցենզավորման գործընթացների կազմակերպում և լիցենզավորված սուբյեկտների կողմից տվյալ գործունեությունն իրականացնելու համար պարտադիր պահանջների և պայմանների պահպանման ուսումնասիրությունների և դրանց նկատմամբ հսկողության իրականացում.

8) ըստ կրթական ծրագրերի և կրթության ձևերի, մարզաձևերի՝ լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճների, համակարգչային դասարանի (լսարանի) նյութատեխնիկական հագեցվածության չափաքանակների, ուսումնադիդակտիկ հագեցվածության, գեղարվեստական, տեղեկատվական և այլ գրականության չափաքանակների մշակում և հաստատում.

9) ուսումնական հաստատությունների, մարզական կառույցների ղեկավար, մանկավարժական, մարզչական և պրոֆետորադասախոսական անձնակազմերին ներկայացվող պահանջների սահմանում.

10) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու մասին հայտի հիման վրա հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու նպատակով տեղում ուսումնասիրությունների իրականացում.

11) պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ ֆիզկուլտուրային և սպորտային տարածքային քաղաքականության իրականացման ապահովում.

12) օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման կարգի մշակում և հաստատում.

13) Արցախի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական, զանգվածային ֆիզկուլտուրային, առողջարարական և մարզական բնույթի միջոցառումների, հանրապետական առաջնությունների, չեմպիոնատների և հավաքների անցկացում, կրթության, գիտության, ֆիզկուլտուրայի և սպորտի հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում.

14) իր ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության, այդ թվում՝ զորահավաքային, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների գծով աշխատանքների համակարգում.

15) կրթության և սպորտի զարգացման պետական ծրագրի, պետական կրթական և մարզական չափորոշիչների մշակում ու դրանց իրականացման աշխատանքների համակարգում.

16) պետական ռազմավարական ծրագրերի շրջանակներում կրթության և սպորտի ոլորտի ծրագրերի իրականացման կազմակերպում և մոնիթորինգ.

17) կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառների մասնագետների հաշվառում և նրանց նկատմամբ հանրապետության պահանջարկի ուսումնասիրում, համակարգի մասնագետների պատրաստման և վերապատրաստման ապահովում.

18) հանրակրթական պետական ծրագրերի, օրինակելի ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ապահովում, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովում.

19) ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման և ատեստավորման կարգերի մշակում և հաստատում.

20) տարրական և հիմնական ընդհանուր կրթության ծրագրերի շրջանակներում տվյալ ուսումնական տարվա ծրագրերը չյուրացրած սովորողի հետագա ուսումնառության կարգի սահմանում.

21) պետական հանրակրթական հաստատությունների անվանակոչման չափանիշների մշակում և հաստատում:

22) «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն ուսանող», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն զինղեկ», «Տարվա լավագույն աշակերտ», «Տարվա լավագույն խմբակավար» ամենամյա մրցույթի անցկացման կարգերի մշակում և հաստատում:

23) Արցախի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգի մշակում և հաստատում:

24) Արցախի Հանրապետության հավաքական թիմերի անդամներին ու կազմակերպություններին մարզահագուստով, մարզագույքով և սարքավորումներով ապահովելու աշխատանքներին մասնակցություն:

25) ուսումնական հաստատությունների պետական նմուշի փաստաթղթերի հայտավորման և բաշխման աշխատանքների համակարգում:

26) կրթության, գիտության և սպորտի բնագավառներում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքների համակարգում:

27) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, վարչական վիճակագրական ռեզիստրների վարում:

28) նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովում:

29) Արցախի Հանրապետության կրթության, գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգ, այդ բնագավառներում Արցախի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատում:

30) նախարարության և նրա համակարգի աշխատողներին խրախուսելու նպատակով գերատեսչական մեդալի սահմանում, այդ մեդալով պարգևատրման կարգի մշակում և հաստատում:

31) իր ենթակայությանը հանձնված կազմակերպություններին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողություն, իսկ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ համաձայնության տրամադրում դրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար:

32) նախարարության տեղեկատվական քաղաքականության և հասարակայնության հետ կապերի կազմակերպում և իրականացում:

33) հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկի և դրանք վարելու կարգի հաստատում:

34) լրացուցիչ կրթության զարգացման ապահովում, լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նկատմամբ մոնիթորինգի իրականացում:

35) բարձրագույն, հետբուհական, միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերի հաստատում:

36) Արցախի Հանրապետության օրենքներով և Արցախի կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Նախարարությունը գլխավորում և նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը կառավարում է

Է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարը (այսուհետ՝ նախարար), որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նախարարն ունի տեղակալ (տեղակալներ), որին (որոնց) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

11. Նախարարն իրականացնում է նախարարությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

12. Նախարարը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

13. Նախարարը

1) իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում և հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր:

2) ղեկավարում, համակարգում և վերահսկում է նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

3) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված նախարարության գործունեության բնագավառներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ նախարարը գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության Նախագահին և կառավարություն:

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

5) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակումներ է կատարում նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

6) աշխատակազմի ղեկավարի և նախարարության համակարգում գործող պետական մարմնի ղեկավարի նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Արցախի Հանրապետության կառավարություն:

7) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին և օգնականներին:

8) օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների սահմանները:

9) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

10) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող

հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կանոնադրությունները և ցուցումները.

11) լսում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

12) վերահսկողություն է իրականացնում նախարարության աշխատակազմին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ, ինչպես նաև նախարարության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ.

13) Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը.

14) Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի աշխատողների թիվը.

15) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով շնորհում է Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ.

16) ստեղծում է խորհրդակցական մարմիններ.

17) տրամադրում է արձակուրդ նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան.

18) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:

14. Նախարարի բացակայության դեպքում նրա հանձնարարությամբ նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալը (տեղակալներից մեկը):

15. Նախարարի տեղակալը

1) համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր լիազորությունների սահմաններում համակարգում է նախարարության՝ իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

3) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ նախարարության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

4) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

5) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

6) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

7) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի վերաբերյալ.

9) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացում նախարարին:

10) նախարարին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասությանը վերաբերող հարցերի մասին:

11) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառնություններ:

IV. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

16. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարության (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների ու տեսչությունների)՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

17. Նախարարության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես պետական կառավարչական հիմնարկ, ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

18. Նախարարության աշխատակազմը գործում է Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Արցախի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

19. Նախարարության աշխատակազմն իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

20. Նախարարության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

21. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

22. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

23. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

24. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

25. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ:

26. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Թումանյան փողոց 48:

V. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՑՔԸ

27. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքների միջոցով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

28. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

29. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան՝ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իր գույքը:

VI. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

30. Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները՝ (գործակալություններ, տեսչություններ):

31. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

32. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

33. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայություններ մատուցող, վերահսկողական գործառույթներ իրականացնող և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

34. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառույթներ կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից:

35. Առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

VII. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

37. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունը և նախարարը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում: Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Աշխատակազմի ղեկավարն ունի տեղակալ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

38. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

3) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը.

5) իրականացնում է Արցախի Հանրապետության Մահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

39. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության որոշումների և նախարարի հրամանների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

40. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

41. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

42. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի ղեկավարի տեղակալը՝ նախարարի հրամանով:

43. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է նախարարության աշխատակազմին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին և տեխնիկական աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

5) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով շնորհում է Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ.

6) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ.

7) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

8) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

9) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

10) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

11) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

12) նախարարի ստորագրմանն է ներկայացնում նախարարի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները.

13) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

14) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

15) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

44. Աշխատակազմի ղեկավարի տեղակալը՝

1) իր լիազորության սահմաններում համակարգում է աշխատակազմի գործունեությունը՝ աշխատակազմի իրեն հանձնարարված ոլորտում վերահսկողության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

2) աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

3) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ և իրեն հանձնարարված ոլորտներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

4) պարբերաբար աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված ոլորտներում աշխատանքների իրականացման ընթացքի մասին.

5) ապահովում է իրեն հանձնարարված ոլորտներում աշխատակազմի ղեկավարի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում աշխատակազմի ղեկավարին.

6) նախարարի և աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառնություններ:

45. Նախարարության աշխատակազմի գլխավոր հաշվապահը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է նախարարության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Արցախի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունները:

46. Նախարարության աշխատակազմի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի

ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

47. Նախարարության աշխատակազմն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններին ներկայացնում է ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

48. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

IX. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐՈՒՄԸ

49. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Վարչություններ

Կրթության և գիտության վարչություն
Սպորտի վարչություն

2. Բաժիններ

Ֆինանսատնտեսական բաժին
Ընդհանուր բաժին
Լիցենզավորման և իրավաբանական բաժին

II. ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Տեսչություններ

Կրթության պետական տեսչություն
Լեզվի տեսչություն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 նոյեմբերի 2017թ.

N 120-Ն

ք.Ստեփանակերտ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ, 71-րդ հոդվածներին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն, ՆՀ-107-Ն և ՆՀ-108-Ն հրամանագրերին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 84 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, 1-2-րդ կետերում, որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի վերնագրում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի I բաժնի՝

ա. 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Բնակարանային հարցերի վարչություն»,

բ. 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Վերաբնակեցման և միգրացիայի բաժին».

4) որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածում՝

ա. վերնագրում «ԼՂՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ» բառերով,

բ. «ԼՂՀ սոցապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 6-ի N 120-Ն որոշման

«Հավելված թիվ 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2004 թվականի մարտի 16-ի N 84 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բնագավառներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Նախարարությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, նախարարության աշխատակազմից, խորհրդականներից, օգնականներից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից և հիմնարկներից:

Նախարարության համակարգում ոչ կառավարչական հիմնարկի կարգավիճակով գործում են նախարարության բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնը և տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնը:

7. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝

1) սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների մշակումն ու իրականացումը.

2) ժողովրդագրական պետական քաղաքականության մշակումը.

3) աշխատանքի պետական կարգավորման և աշխատանքի վարձատրության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

4) բնակչության զբաղվածության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

5) պետական կենսաթոշակային ապահովության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

6) ժամանակավոր անաշխատունակության դեպքում սոցիալական ապահովության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

7) սոցիալական աջակցության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

8) հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

9) ծնելիության և բազմազավակության խթանման պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

10) ընտանիքի և երեխաների սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.

11) ընտանիքների կարիքավորության գնահատման համակարգի միջոցով ընտանիքների սոցիալական պաշտպանության արդյունավետության ու սոցիալական աջակցության հասցեականության ապահովումը.

12) վերաբնակեցման և միգրացիոն պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը.

13) բնակարանային ծրագրերի մոնիթորինգի իրականացումը և բնակարանային ոլորտում պետական աջակցության ծրագրերի համակարգման կազմակերպումը.

14) սոցիալական ապահովության ոլորտի պետական նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման աշխատանքների համակարգումը.

15) աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում Արցախի Հանրապետության օրենսդրության կիրառման նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը.

16) միջազգային կազմակերպությունների և Արցախի Հանրապետության տարածքում գործող ոչ առևտրային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

8. Նախարարության անվանումն է՝

հայերեն լրիվ անվանումը՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն,

ռուսերեն լրիվ անվանումը՝ Министерство труда, социальных вопросов и миграции Республики Арцах,

անգլերեն լրիվ անվանումը՝ Ministry of labor, social affairs and resettlement of the Republic of Artsakh:

9. Նախարարության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Ազատամարտիկների 54:

2. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Նախարարությունն իր նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) աշխատանքի և զբաղվածության բնագավառում՝

ա. աշխատանքային օրենսդրության կատարելագործման, աշխատանքային հարաբերություններում սոցիալական գործընկերության զարգացման նպատակով առաջարկությունների մշակում, դրանց ներդրման կազմակերպում և կատարման նկատմամբ մոնիթորինգ,

բ. աշխատանքի խթանման, արդյունավետության բարձրացման ու վարձատրության վերաբերյալ առաջարկությունների մշակում, դրանց ներդրման կազմակերպում և կատարման նկատմամբ մոնիթորինգ,

գ. բնակչության զբաղվածության բնագավառը կարգավորող օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակում, զբաղվածության բնագավառը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովում,

դ. բնակչության զբաղվածության կարգավորման նպատակով, աշխատաշուկայի ձևավորված պահանջներին համապատասխան, զբաղվածության պետական ծրագրերի մշակում և դրանց կատարման նկատմամբ մոնիթորինգ,

ե. աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի քաղաքականության մշակում.

2) կենսաթոշակային ապահովության, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների բնագավառում՝

ա. օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում,

բ. պետական կենսաթոշակների, պատվովճարների, ամենամյա դրամական օգնությունների, այլ հատուցումների, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման, վերահաշվարկման և վճարման մեթոդական ղեկավարում,

գ. պետական կենսաթոշակների, պատվովճարների, ամենամյա դրամական օգնությունների, այլ հատուցումների, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակման, վերահաշվարկման և վճարման նկատմամբ մոնիթորինգ և վերահսկողության իրականացում,

դ. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների, պատվովճարների, ամենամյա դրամական օգնությունների և այլ հատուցումների նշանակում, վերահաշվարկում և վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով վճարում,

ե. «Պետական կենսաթոշակների մասին», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված՝ համապատասխան բնագավառներում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի գործառնություններ.

3) ընտանիքի և երեխաների հիմնահարցերի բնագավառում՝

ա. ընտանիքի և երեխաների հիմնահարցերի ուսումնասիրում, դրանք կարգավորող օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների նախապատրաստում, ներդրման կազմակերպում և կատարման նկատմամբ մոնիթորինգ,

բ. ծնելիության և բազմազավակության խթանման ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկությունների մշակում ու ներդրման կազմակերպում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում,

գ. պետական նպաստների նշանակման, վերահաշվարկման, կասեցման, դադարեցման, վճարման՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում,

դ. կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների հետ տեղերում այդ ծրագրերի համագործակցված կատարում,

ե. երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և սոցիալապես անապահով երեխաների տեղավորման, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացում,

զ. որդեգրման ենթակա և որդեգրված երեխաների ու որդեգրողների թեկնածությունների կենտրոնացված հաշվառման իրականացում,

է. խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության նկատմամբ բարձրագույն մասնագիտական հսկողության իրականացում.

4) քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպում.

5) սոցիալական աջակցության բնագավառում՝

ա. սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում, օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների նախապատրաստում, դրանց ներդրման կազմակերպում,

բ. սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրության կատարելագործման նպատակով իրավական ակտերի նախագծերի մշակում և ընդունված իրավական ակտերի կատարման նկատմամբ մոնիթորինգ,

գ. սոցիալապես անապահով ընտանիքների, առանձին սոցիալական խմբերի սոցիալական պաշտպանությանն ու հասցեական օգնության իրականացմանն ուղղված պետական ծրագրերի մշակում, իրականացում և համակարգում,

դ. հաշմանդամների բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական ծրագրերի մշակում և իրականացում,

ե. հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով և կյանքը թեթևացնող միջոցներով ապահովման գործընթացի կազմակերպում,

զ. բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում ու տնային պայմաններում միայնակ տարեց ու հաշմանդամ քաղաքացիների խնամքի կազմակերպման գործընթացի կազմակերպում,

է. անօթևան, մուրացկան և թափառաշրջիկ անձանց, այդ թվում՝ երեխաների համար սոցիալական օգնության պետական ծրագրերի մշակում և իրականացում.

6) բարեգործական ծրագրերի համակարգման բնագավառում՝

ա. բարեգործական ծրագրերի համակարգման աշխատանքների կազմակերպում,

բ. Արցախի Հանրապետության հասցեով մարդասիրական օգնության կարգով ստացված ապրանքների մաքսային ձևակերպումների իրականացում, տեղափոխման և պահպանման կազմակերպում, ինչպես նաև բաշխման վերաբերյալ Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնին առաջարկությունների ներկայացում.

7) ժողովրդագրական քաղաքականության բնագավառում՝

ա. ժողովրդագրական իրավիճակի վերլուծություն և գնահատում,

բ. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված միտումների տեսանկյունով, ժողովրդագրական փորձաքննության կազմակերպում.

8) ընտանիքների կարիքավորության գնահատման բնագավառում՝

ա. ընտանիքների կարիքավորության գնահատման «Արցախ» համակարգում ընտանիքների ընդգրկման ապահովում,

բ. ընտանիքների կարիքավորության գնահատում,

գ. ընտանիքների կարիքավորության բնութագրիչ գործոնների սահմանային արժեքների ձևավորում և պետական ծրագրերում ընտանիքների ընդգրկման ապահովում.

9) վերաբնակեցման և միգրացիոն քաղաքականության բնագավառում՝

ա. վերաբնակեցման և միգրացիոն պետական քաղաքականության մշակման աշխատանքների կազմակերպում և համակարգում,

բ. վերաբնակեցման և միգրացիոն պետական քաղաքականության հայեցակարգի մշակում,

գ. Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի նախագծերի վերաբերյալ միգրացիոն հետևանքների տեսանկյունից առաջարկությունների ներկայացում,

դ. հանրապետության տարածքում բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով ստեղծված միգրացիոն իրավիճակի գնահատման, զարգացման հիմնական միտումների վերլուծության աշխատանքների կազմակերպում, համակարգում և ղեկավարում,

ե. Արցախի և Հայաստանի Հանրապետությունների պետական կառավարման մարմինների, դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և սփյուռքի հետ համագործակցություն վերաբնակեցման և միգրացիոն ծրագրերի մշակման, իրականացման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման, համակարգման և վերահսկման ոլորտներում,

զ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վերաբնակեցման ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագրերի իրականացում,

է. Արցախի Հանրապետությունում որպես փախստական հաշվառված ընտանիքներին օրենսդրությամբ սահմանված աջակցության տրամադրման աշխատանքների համակարգում և վերահսկում,

ը. վերաբնակեցման և միգրացիոն ոլորտի տեղեկատվական բանկի վարման աշխատանքների կազմակերպում.

10) Բնակարանային քաղաքականության բնագավառում՝

ա. բնակչության սոցիալական առանձին խմբերի այդ թվում վերաբնակիչների և փախստականների, բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ բնակարանային ծրագրերի մոնիթորինգի իրականացում և համապատասխան իրավասու մարմինների հետ շփումների և շրջայցերի միջոցով տվյալների հավաքագրում և մշակում,

բ. բնակարանային ոլորտում պետական աջակցության ծրագրերի համակարգման աշխատանքների կազմակերպում,

գ. բնակարանային ոլորտի միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության ուղղություններին առնչվող հարցերի, ծրագրային մոտեցումների և դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ համապատասխան մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների կապակցությամբ փորձաքննության անցկացում և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

11) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման բնագավառում՝

ա. Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի մշակման աշխատանքներին մասնակցություն,

բ. սոցիալական ապահովության համակարգում տեղեկատվական հոսքերի ձևավորման և դրանց կառավարման իրականացում,

գ. սոցիալական ապահովության բնագավառում սոցիալական մոնիթորինգի կազմակերպում, անցկացում և ստացված տվյալների հիման վրա համալիր վերլուծության իրականացում,

դ. պարզաբանումների տրամադրում և խորհրդատվական օգնության կազմակերպում՝ ըստ սոցիալական ապահովության բնագավառների,

ե. քաղաքացիների ընդունելության կազմակերպում, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկում,

զ. զանգվածային լրատվության և հանրային իրազեկման այլ միջոցներով աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում վարվող քաղաքականության լուսաբանում,

է. Արցախի Հանրապետության տարածքում գործող ոչ առևտրային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացում՝ ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներին, ըստ անհրաժեշտության, ներգրավելով քաղաքականության, ռազմավարությունների մշակման գործընթացում,

ը. համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկանքների և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքագրված

տվյալների և տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեզիստրների վարում,

թ. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառնությունների իրականացում:

3. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Նախարարությունը գլխավորում և նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը կառավարում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարը (այսուհետ՝ նախարար), որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը:

Նախարարն ունի տեղակալ (տեղակալներ), որին (որոնց) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

12. Նախարարն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրներն ու գործառնությունները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի գնահատման և վերլուծության, հեռանկարային զարգացման ապահովման համար:

13. Նախարարը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

14. Նախարարը՝

1) ղեկավարում, համակարգում և վերահսկում է նախարարության համակարգի մեջ մտնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ոչ կառավարչական հիմնարկների ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար.

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված գործունեության բնագավառների, նպատակների ու խնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության Նախագահին և կառավարություն.

3) լսում և կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության մարմինների տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

4) իրականացնում է նախարարության աշխատակազմի կառավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում.

5) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը:

Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքները.

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է

ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ոչ կառավարչական հիմնարկների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները.

8) վերահսկողություն է իրականացնում նախարարության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ.

9) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի աշխատողների թիվը.

10) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

11) տրամադրում է արձակուրդ նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան.

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարության համակարգի աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

13) կարող է կազմավորել աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

14) իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

15) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շնորհում է դասային աստիճաններ.

16) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

15. Նախարարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալներից մեկը:

16. Նախարարի տեղակալը՝

1) համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր լիազորությունների սահմաններում համակարգում է նախարարության՝ իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ նախարարության համակարգի պետական մարմինների և նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ոչ կառավարչական հիմնարկների միջոցով՝ տալով ցուցումներ և հանձնարարականներ.

3) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմիններին տալիս է հանձնարարականներ և առաջադրանքներ, վերահսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ.

4) նախարարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

5) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացում նախարարին:

6) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

17. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարությանը՝ այդ թվում նրա կազմում գործող առանձնացված ստորաբաժանումներին, օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

18. Նախարարության աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է նախարարությանը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

19. Նախարարության աշխատակազմը գործում է Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Արցախի Հանրապետության օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության համաձայն:

20. Նախարարության աշխատակազմն, իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

21. Նախարարության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ հայերեն լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

22. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

23. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

24. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

26. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

27. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Ազատամարտիկների 54:

5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

28. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև

Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքների միջոցով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ՝ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

29. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

30. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իր գույքը:

6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31. Նախարարության աշխատակազմի կառուցվածքը ներառում է նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ):

32. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

33. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

34. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման գործառույթներ իրականացնող մարմին է:

35. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառույթներ կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

37. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իր անվանմամբ հայերեն և ռուսերեն լեզուներով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

38. Նախարարության աշխատակազմի կառավարումն, օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում, իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունը և նախարարը, իսկ ղեկավարումը՝ նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

39. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ.

3) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը.

5) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

40. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության որոշումների ու նախարարի որոշումների և սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

41. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

42. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և հրահանգները:

43. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներից մեկը՝ նախարարի հրամանով:

44. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) օրենքով նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

5) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ.

6) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է

ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

7) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

8) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

9) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

10) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

11) նախարարի ստորագրությանն է ներկայացնում նախարարի հրամանները և կարգադրությունները.

12) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

13) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

14) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

45. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը գործում է նախարարության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Արցախի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

46. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱՎԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

47. Նախարարության աշխատակազմը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

48. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

9. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

49. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 նոյեմբերի 2017թ.

N 121-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն և ՆՀ-107-Ն հրամանագրերին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ը ը ը ը ը**։

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 15-ի «ԼՂՀ տարածքում վերաբնակվող ընտանիքներին տրամադրվող արտոնությունների մասին» N 121 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ, 6-րդ կետերում, որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «ա», «բ», «գ» պարբերություններում, 5-րդ կետի «ա», «գ» պարբերություններում, որոշմամբ հաստատված կարգով սահմանված ձևերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) որոշման 2-րդ կետում, որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի «գ» պարբերությունում «վարչության» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության» բառերով.

3) որոշման 8-րդ կետում «և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների և Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով.

4) որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «բ», «գ» պարբերություններում, 5-րդ կետի «ա», «գ» պարբերություններում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերով և դրանց հոլովաձևերով.

5) որոշմամբ հաստատված կարգով սահմանված՝ ԼՂՀ տարածքում վերաբնակվող ընտանիքի արտոնություններից օգտվելու ցանկում «Վարչության պետ» բառերը փոխարինել «Նախարար» բառով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 14-ի «Սոցիալապես անապահով քաղաքացիներին նյութական օգնություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 61 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետին» բառերը՝ «Արցախի Հանրապետության պետական նախարարին» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. 2-րդ կետում «ԼՂՀ սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով,

բ. 6-րդ կետում «ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության, ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով, իսկ «բ» պարբերությունից հանել «և ԼՂՀ վարչապետի գրավոր համաձայնության» բառերը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Պետական ծրագրի շրջանակներում բնակելի շինությունների վերակառուցման հետևանքով վարձակալական հիմունքներով բնակվող ընտանիքներին բնակարան վարձակալելու նպատակով ֆինանսական օգնության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 672-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը» բառերով.

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Ընտանիքին բնակելի տարածության վարձակալության դիմաց ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն ապահովում է լիազոր մարմնի աշխատակազմի բնակարանային հարցերի վարչությունը:».

3) 9-10-րդ և 13-րդ կետերում «հանձնաժողով» բառը և դրա հոլովածները փոխարինել «լիազոր մարմին» բառով և դրա հոլովածներով.

4) 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի «Պետական ծրագրի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում վարձակալական հիմունքներով բնակվող փախստականի հաշվառման վկայական ստացած ընտանիքներին ֆինանսական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 381-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը» բառերով.

3) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Շահառուին բնակելի տարածության վարձակալության դիմաց ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացն ապահովում է լիազոր մարմնի աշխատակազմի բնակարանային հարցերի վարչությունը՝

համագործակցելով փախստականների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:».

4) 10-րդ կետում «աշխատանքային խումբը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2017թ.

N 160-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1
ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՌԱՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	(580,000.0)
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	-	(580,000.0)
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	-	(580,000.0)
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	-	-	(580,000.0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	(580,000.0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	-	-	580,000.0
	2		Այլ ծախսեր	-	-	-	580,000.0
		1	Այլ ծրագրեր	-	-	-	580,000.0
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	-	580,000.0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	-	580,000.0

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2017թ.

N 161-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱԲԿԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
26-Ի N 19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 71-րդ հոդվածները և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է**:

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 26-ի ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 19 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին և 2-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների.

3) որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բնագավառներում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան և դրանցով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

5. Նախարարությունն ունի կանոնադրություն, Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության անվանմամբ հայերեն կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Նախարարությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Նախարարությունը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդակցանից, մամուլի քարտուղարից, օգնականներից և ռեֆերենտներից, նախարարության աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

7. Նախարարության լրիվ անվանումն է՝

հայերեն լրիվ անվանումը՝ Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն,

ռուսերեն լրիվ անվանումը՝ Министерство градостроительства Республики Арцах,

անգլերեն լրիվ անվանումը՝ Ministry of urban development the Artsakh Republic:

Նախարարության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Նաբերեժնայա փողոցի 3-րդ նրբանցք, N 1 շենք:

8. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի շրջանակներում քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, տարածքների ինժեներական պաշտպանության, բնակարանային-կոմունալ տնտեսության, տարածքային հատակագծման և տարաբնակեցման համակարգերի

ձևավորման, տարածքների պլանավորման ու զարգացման, դրանց նպատակային օգտագործման ուղղությունների և գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներատրանսպորտային ու այլ ենթակառուցվածքների կազմակերպման ոլորտներում հեռանկարային զարգացման ծրագրերի և պետական քաղաքականության մշակման ապահովումը.

2) բնագավառի զարգացումն ապահովող և գործունեությունը կարգավորող օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը և դրանք սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելը.

3) Արցախի Հանրապետության կապիտալ շինարարության բնագավառում պատվիրատուի պարտականությունների իրականացում և կապալային եղանակով Արցախի Հանրապետության տարածքում կապիտալ շինարարության կազմակերպումը.

4) սահմանված կարգով կապիտալ շինարարության տեխնիկական հսկողության իրականացումը.

5) քաղաքաշինական, ճարտարապետական ու շինարարական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի (շինարարական նորմեր, ստանդարտներ, հրահանգներ և այլն) մշակումն ու սահմանված կարգով հաստատումը (ընդունումը, բացի ազգային ստանդարտներից).

6) իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության, նրա վարչատարածքային միավորների և դրանց բաղկացուցիչ մասերի սոցիալ-տնտեսական զարգացման պետական նպատակային ծրագրերի քաղաքաշինական հիմնավորումների մշակման ու իրականացման ապահովումը.

7) բնակավայրերի, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսված այլ հողերի օգտագործման, քաղաքաշինական սահմանափակումների և նորմերի սահմանման քաղաքականության մասով հողային պաշարների պետական կառավարման իրականացումը.

8) իր իրավասության սահմաններում բնակավայրի կայուն զարգացման քաղաքականության մշակումը.

9) բնագավառի տեխնիկական քաղաքականության վարումը և այդ աշխատանքների համակարգումը Արցախի Հանրապետության տարածքում.

10) քաղաքաշինության բնագավառում գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը.

11) Արցախի Հանրապետության տարածքում սեյսմակայուն շինարարության իրականացման նպատակով կատարվող ինժեներահետազննական, տարածքների ինժեներական պաշտպանության, շահագործվող շենքերի և կառուցվածքների (այդ թվում՝ ինժեներական) տեխնիկական վիճակի ուսումնասիրման, վկայագրավորման (անձնագրավորման) ուղղությամբ կատարվող աշխատանքների կազմակերպման ու համակարգման ապահովումը.

12) բնակարանային քաղաքականության (բնակարանային շինարարության), բնակարանային տնտեսության մեջ առկա առանձին հիմնահարցերին վերաբերող ծրագրային փաստաթղթերի մշակումը և դրանց ներդրման մեխանիզմների ապահովումը.

13) իր իրավասության սահմաններում կոմունալ ոլորտի քաղաքականության հիմունքների մշակումը և դրանց ներդրման մեխանիզմների ապահովումը.

14) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին Արցախի Հանրապետության անդամակցության և միջազգային պայմանագրերին (համաձայնագրերին) միանալու նպատակով իրականացվող աշխատանքներին մասնակցելը.

15) միջազգային ֆինանսական կազմակերպությունների, դոնոր երկրների հետ համատեղ իր իրավասության սահմաններում բնագավառին ցուցաբերվող

օժանդակության և աջակցության ծրագրերի նախապատրաստումն ու դրանց իրականացումը.

16) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերն իրականացնող գրասենյակների հետ համագործակցությունը.

17) Արցախի Հանրապետությունում ոլորտի ձեռնարկատիրական գործունեության (այդ թվում՝ փոքր և միջին) զարգացմանը նպաստելը.

18) Արցախի Հանրապետության տարածքային հատակագծման և տարաբնակեցման նախագծերի մշակման ապահովումը, նշված նախագծերի՝ սահմանված կարգով հաստատումից հետո դրանցով ամրագրված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

19) քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, ինչպես նաև շենքերի և շինությունների շինարարության (քանդման) ու շահագործման ընթացքում մարդկանց ու կենսագործունեության միջավայրի անվտանգությունն ապահովելու նպատակով Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական գործունեության նկատմամբ պետական տեսչական վերահսկողությունը.

20) քաղաքաշինական գործունեության առանձին տեսակների՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը.

21) Արցախի Հանրապետության պետական քաղաքաշինական կադաստրի վարումը, ամփոփումն ու քաղաքաշինական տեղեկատվական բանկի կազմավորումը.

22) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իր իրավասության սահմաններում բնագավառում տեխնիկական նորմավորման, ստանդարտացման և համապատասխանության հավաստման ուղղությամբ կատարվող աշխատանքների կազմակերպումը.

23) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների իրականացումը:

II. ՆԱԽԱԴԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

9. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) իր իրավասության սահմաններում ոլորտի ներդրումների ներգրավմանն ու դրանց պաշտպանությանը նպաստելը.

2) իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետությունում ոլորտի ներդրումային քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննությանը մասնակցելը.

3) առանձին ներդրումային ծրագրերի մշակումը, դրանք սահմանված դեպքերում համապատասխան մարմիններ ներկայացնելը և դրանց իրականացմանը ցուցաբերվող օժանդակության ապահովումը.

4) օրենսդրական ակտերով սահմանված դեպքերում և կարգով՝ քաղաքաշինական նպատակով հողամասերի հատկացումների վերաբերյալ առաջարկությունների, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման նախագծային առաջադրանքների և նախագծերի համաձայնեցումը.

5) պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ճարտարապետական-քաղաքաշինական ծառայությունների մեթոդական օժանդակումը.

6) իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության վարչատարածքային միավորների և պետական սահմանի սահմանազատման (դելիմիտացիա) և սահմանագծման (դեմարկացիա) աշխատանքներին մասնակցելը.

7) շինարարական արտադրության, բնակարանային և իր իրավասության սահմաններում՝ հողի շուկայի զարգացմանը նպաստող արդյունավետ մեխանիզմների մշակումը.

8) բնագավառին (այդ թվում՝ սեյսմակայուն շինարարությանը) վերաբերվող կիրառական գիտական հետազոտությունների և փորձարարական ստրուկտուրական աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը.

9) օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կազմակերպումը.

10) իր իրավասության սահմաններում բնագավառին վերաբերվող հարցերի գծով օտարերկրյա պետությունների հետ գիտատեխնիկական համագործակցության ծրագրերի մշակման ու իրականացման, միջազգային առաջատար փորձի ուսումնասիրման, տարածման ու ներդրման աշխատանքներին մասնակցելը.

11) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տարածքային մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, հիմնարկների քաղաքաշինական գործունեության տեսչական ստուգումների իրականացումը.

12) իր իրավասության սահմաններում բաժնետիրական ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի տիրապետումը.

13) կապալառու կազմակերպության ֆինանսավորման աշխատանքների կազմակերպումը.

14) շինարարության կատարողականի, այլ առաջնային փաստաթղթերի և հաշվետվությունների կազմումը, շինությունների շահագործման և հանձնման աշխատանքների իրականացումը.

15) կապալառուի մասնակցությամբ՝ կատարված շինարարական աշխատանքների ստուգումը և ընդունումը.

16) կատարված շինարարական աշխատանքների մասին կանոնավոր հաշվետվությունների կազմումը և ներկայացումը Արցախի Հանրապետության կառավարություն.

17) իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը մասնակցությունը և ոլորտին հատկացված բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ապահովումը և վերահսկումը.

18) իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ամենամյա ծրագրերի մշակման մասնակցությունը.

19) սոցիալ-տնտեսական ամենամյա ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում գույք ձեռք բերելը և օտարելը:

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարը (այսուհետ՝ նախարար) գլխավորում է նախարարությունը և կառավարում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը: Նախարարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը:

Նախարարն ունի տեղակալ (ներ), որին (որոնց) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Նախարարը կարող է ունենալ խորհրդականներ, մամուլի քարտուղար, օգնական և ռեֆերենտ, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:

Նախարարն Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան ունի արձակուրդի իրավունք: Նախարարին արձակուրդ տրամադրվում է Արցախի Հանրապետության Նախագահի համաձայնությամբ:

Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

11. Նախարարն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի գնահատման և վերլուծության, հեռանկարային զարգացման ապահովման համար:

12. Նախարարը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

13. Նախարարը՝

1) ղեկավարում, համակարգում և վերահսկում է նախարարության մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման համար:

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված գործունեության բնագավառների, նպատակների ու խնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության Նախագահին և Արցախի Հանրապետության կառավարություն:

3) լսում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության մարմինների տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները:

4) իրականացնում է նախարարության աշխատակազմի կառավարումը՝ օրենքով և նախարարության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում:

5) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը:

Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքները:

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները:

7) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և նախարարության կանոնադրությանը համապատասխան սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները:

8) վերահսկողություն է իրականացնում նախարարության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ:

9) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի աշխատողների թիվը.

10) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

11) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին, օգնականներին ու ռեֆերենտներին.

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարության համակարգի աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

13) կարող է կազմավորել աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

14) իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

15) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շնորհում է դասային աստիճաններ, դասային հատուկ կոչումներ.

16) իր լիազորության սահմաններում հիմնում է գերատեսչական պարզևներ.

17) նախարարության աշխատակազմի ղեկավարին տրամադրում է արձակուրդ՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան.

18) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

14. Նախարարի բացակայության դեպքում նախարարի հրամանով նրա պարտականությունները կատարում է նախարարի տեղակալներից մեկը:

15. Նախարարի տեղակալը՝

1) համակարգում է նախարարության աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր լիազորության սահմաններում համակարգում է նախարարության՝ իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ նախարարության համակարգի պետական մարմինների և նախարարության կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

3) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմիններին տալիս է հանձնարարականներ և առաջադրանքներ, վերահսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ.

4) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

5) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

6) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

7) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի վերաբերյալ.

9) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացում նախարարին:

10) նախարարին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասությանը վերաբերվող հարցերի վերաբերյալ:

11) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով նախատեսված, նախարարի հանձնարարությամբ այլ լիազորություններ:

16. Նախարարի տեղակալը Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և դրանով սահմանված կարգին համապատասխան ունի արձակուրդի իրավունք: Նախարարի տեղակալին արձակուրդ տրամադրվում է նախարարի կողմից:

IV. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

17. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարության (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների ու տեսչությունների)՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիզորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

18. Նախարարության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես պետական կառավարչական հիմնարկ, ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

19. Նախարարության աշխատակազմը գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Արցախի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

20. Նախարարության աշխատակազմն, իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնակազմի ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

21. Նախարարության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ՝ հայերեն կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

22. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

23. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

24. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

26. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

27. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Նաբեբեժնայա փողոց 3-րդ նրբանցք, N 1 շենք:

V. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

28. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

29. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

30. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:

VI. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31. Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները:

32. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

33. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

34. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման, վերահսկողական գործառույթներ և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

35. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներն իրականացնում են նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառույթները կամ դրանց մի մասը և հանդես են գալիս Արցախի Հանրապետության անունից:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներն իրավունք ունեն Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

37. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներն ունեն Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իրենց անվանմամբ՝ հայերեն կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

VII. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

38. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունը և նախարարը՝ օրենքով ու սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

39. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

3) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը.

5) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

40. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության որոշումների, նախարարի հրամանների ու սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

41. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

42. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

43. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից մեկը՝ նախարարի հրամանով:

44. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով, հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների իրականացումը.

5) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին և տեխնիկական սպասարկումն ապահովող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

6) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

7) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար:

8) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

9) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը:

10) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը:

11) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը:

12) նախարարի ստորագրությանն է ներկայացնում նախարարի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները:

13) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ:

14) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

15) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Նախարարության աշխատակազմն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

46. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

47. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է նախարարության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Արցախի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

48. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

IX. ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

49. Նախարարության գործավարությունը տարվում է նախարարի հրամանով հաստատված՝ գործավարության կարգին համապատասխան:

**X. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

50. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման, լուծարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԼԱԶԱՐՅԱՆ**

Ա.

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 16-ի N 161-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
2005թ. հունվարի 26-ի թիվ 19 որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Կապիտալ շինարարության վարչություն
Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժին
Քաղաքաշինության քաղաքականության և ճարտարապետության բաժին
Շինարարության քաղաքականության և ծրագրերի բաժին
Բնակարանային, կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժին
Գնագոյացման և տեղեկատվական բաժին
Ճանապարհաշինության քաղաքականության բաժին
Անձնակազմի կառավարման և վարչատնտեսական բաժին
Իրավաբանական բաժին

II. ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Քաղաքաշինական պետական տեսչություն»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2017թ.

N 163-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 506 որոշմամբ հաստատված՝

1) թիվ 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով,

բ. 17-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը» բառերը փոխարինել «լիցենզավորող մարմինը» բառերով.

2) թիվ 2 հավելվածի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 449 որոշման՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝ Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի ու Արցախի Հանրապետության ոստիկանության պետի հետ համաձայնեցնելուց հետո հաստատել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստման ու վերապատրաստման դասընթացների ուսումնական ծրագրերը և ապահովել մասնագետների պատրաստումը՝ սկսած 2009 թվականի հունվար ամսից:».

2) թիվ 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով,

բ. 2և N1-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով,

գ. 38-րդ կետում, 2և N 2-ում և 2և N 6-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով,

դ. 40-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարը» բառը փոխարինել «Նախարարը» բառով,

ե. 55-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը» բառերը փոխարինել «լիցենզավորող մարմինը» բառերով.

3) թիվ 2 հավելվածի **«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»** բառերը փոխարինել **«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»** բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 23-ի «6ԿՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի մասին» N 343 որոշմամբ հաստատված՝

1) թիվ 1 հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի պետական տեսչության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության» բառերով.

2) թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի հանդիպումների և քննարկումների (աշխատանքի) կարգը հաստատելու մասին» N 102-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով.

2) 4-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին» բառերով.

3) 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովի կազմում, բացի նախարարության ներկայացուցիչներից, ընդգրկվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Արցախի Հանրապետության ոստիկանության և Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մեկական անդամներ»:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 24-ի N 102-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովին ռադիոհաճախականությունների որոշակի հատվածների առանձնացման վերաբերյալ հայտեր ներկայացնելու և քննարկելու կարգը հաստատելու մասին» N 895-Ն որոշմամբ հաստատված՝

1) N 1 հավելվածի՝

ա. 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով,

բ. 4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին» բառերով.

2) N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերով,

բ. 9-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) եթե հայտի վերաբերյալ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության և Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հանձնաժողովի անդամ հանդիսացող ներկայացուցիչների կողմից ներկայացվել է հատուկ կարծիք՝ հայտի մերժման վերաբերյալ առաջարկությամբ.»:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի «Ռադիոհաճախականության շերտերի կառավարական նշանակության սպեկտրի օգտագործման իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկը և կառավարական նշանակության սպեկտրի ռադիոհաճախականության շերտերի հատկացման կարգը հաստատելու մասին» N 198-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածում.

ա. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի» բառերով,

բ. 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն, ինչպես նաև Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն և Արցախի Հանրապետության ոստիկանություն» բառերով:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 16-ի N 163-Ն որոշման

«Հավելված 3
ԼՂՀ կառավարության
2005թ. օգոստոսի 23-ի թիվ 343 որոշման
Ձև



**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

ք. Ստեփանակերտ, Փետրվարի 20

« _____ » _____ 20 թ.

ԷԼԵԿՏՐՈՍՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _____

Էլեկտրատեղակայանքի սեփականատեր _____
(կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ), ֆիզիկական անձի լրիվ անվանումը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

Տեղադրման վայրը _____
Լրիվ անվանումը _____

Անվանական լարումը _____ (կՎ)
Լարման տեսակը _____
(հաստատուն/փոփոխական/իմպուլսային/այլ)

Լարման ֆազերի քանակը _____
Հզորությունը _____ (կՎԱ, կՎտ)
Էլեկտրասնման աղբյուրը _____

Ակտ-կարգադրագրի համարը և ամսաթիվը _____
Տեխնիկական պայմանների համարը և ամսաթիվը _____

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(կազմակերպության /անհատ ձեռնարկատիրոջ/ լրիվ անվանումը (ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը))

(Էլեկտրատեղակայանքի լրիվ անվանումը)

տեխնիկական վիճակը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերի
պահանջներին: Թույլատրվում է էլեկտրատեղակայանքը գործարկել:

Կ.Տ.

Տեսչության պետ _____ »:
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 16-ի N 163-Ն որոշման

«Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի N 198-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՊԵԿՏՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ

Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն

Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն

Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն

Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն

Արցախի Հանրապետության ոստիկանություն»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2017թ.

N 164-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 17-ի «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 227 որոշման առաջին կետի «ը» ենթակետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 22-ի «Հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին վերապահելու մասին» N14, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի և շրջվարչակազմերի ղեկավարների հողային պետական տեսչական իրավասությունները սահմանազատելու մասին» N 501 որոշումների վերնագրերում և տեքստերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով համապատասխան հոլովաձևերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 21-ի «Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում ԼՂՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունները ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին վերապահելու մասին» N 25 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 21-ի «Աշխարհագրական անվանումների բնագավառում պետական կառավարման մարմնի իրավասությունը ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին վերապահելու մասին» N 26 որոշումների վերնագրերում «ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով, իսկ որոշումների տեքստերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին» բառերը

փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց անշարժ գույքի գնահատման մասնագիտական որակավորում իրականացնող լիազոր մարմին սահմանելու մասին» N 579 որոշման մեջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունն» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2017թ.

N 165-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 2-Ի N 764-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի ««Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական կառավարման լիազորված մարմնի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 30-ի N 455 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 764-Ն որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2017թ.

N 166-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 2-Ի N 765-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին լիազորություններ տալու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 18-ի N 206 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 765-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում, 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

2) 1-ին կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության», «Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության», «Արցախի Հանրապետության ոստիկանության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 167-Ն

ք.Ստեփանակերտ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 442 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագիրը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 442 որոշման 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Արցախի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականությունը:

2. Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարության լիազորությունները սահմանվում են օրենքներով, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան և դրանցով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

5. Նախարարությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Նախարարությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով նախարարության անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդականներից, մամուլի քարտուղարից, օգնականներից և ռեֆերենտներից, նախարարության աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

7. Նախարարության անվանումն է՝

հայերեն լրիվ անվանումը՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն,

ռուսերեն լրիվ անվանումը՝ Министерство охраны природы и природных ресурсов Республики Арцах,

անգլերեն լրիվ անվանումը՝ The Ministry of Nature protection and natural resources of the Republic of Artsakh:

Նախարարության գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փողոց, N 1, կառավարության շենք:

II. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Նախարարության նպատակները և խնդիրներն են.

1) Արցախի Հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման,

բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, ինչպես նաև բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը.

2) Արցախի Հանրապետության բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը.

3) բնապահպանության ոլորտում պետական պատվերի ձևավորման ու տեղադրման ապահովումը.

4) շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների մասին տվյալների միասնական հանրապետական ֆոնդերի, կադաստրների ու ռեգիստրների վարման ապահովումը.

5) Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր թափոնների էկոլոգիայի անվտանգ կառավարման պայմանների ապահովումը.

6) շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների մասին տվյալների միասնական հանրապետական ֆոնդերի կադաստրների ու ռեգիստրների վարման ապահովումը.

7) բնապահպանության ոլորտում լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների տրամադրման ապահովումը.

8) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովումը.

9) էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման միասնական քաղաքականության ապահովումը.

10) ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման ապահովումը.

11) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջների ապահովումը.

12) ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելը.

13) ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության ապահովումը.

14) երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման և տնօրինման ապահովումը.

15) ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորման ապահովումը.

16) օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարման աշխատանքների իրականացման ապահովումը.

17) իր իրավասության սահմաններում ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովումը:

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) բնապահպանության ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում Արցախի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերարտադրության բնագավառի պետական քաղաքականության ու ռազմավարության մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

- բ. բնապահպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի, ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի մշակում,
- գ. Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի բնապահպանության ոլորտին վերաբերող բաժինների մշակում,
- դ. շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման և վերականգնման տնտեսական մեխանիզմների, այդ թվում՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի մշակում,
- ե. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների խախտման հետևանքով պետությանը հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակում ու հասցված վնասի հաշվարկում,
- զ. կրթության և գիտության բնագավառի լիազոր մարմնի հետ համատեղ էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման ռազմավարության հիմնական ուղղությունների մշակում,
- է. բնական ռեսուրսների կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորում,
- ը. շրջակա միջավայրի վիճակի, այդ թվում՝ նաև թափոնների հեռացման վայրերի պետական դիտանցի (մոնիթորինգի) իրականացման կարգերի մշակում,
- թ. շրջակա միջավայրի վիճակի, ներառյալ՝ միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման աշխատանքների պետական պատվերի ձևավորում,
- ժ. շրջակա միջավայրի վիճակի, շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության և դրանց աղբյուրների բացահայտման, ուսումնասիրության և մոնիթորինգի (դիտանցի) չափորոշիչների մշակում,
- ժա. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարում,
- ժբ. բնական ռեսուրսների կադաստրների ու ռեգիստրների ստեղծում և դրանց վարման կարգերի սահմանում,
- ժգ. Արցախի Հանրապետության բույսերի ու կենդանիների Կարմիր գրքերի վարման կարգերի սահմանում,
- ժդ. Արցախի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության մշակում և դրա իրականացման մոնիթորինգ,
- ժե. համաձայն ջրի ազգային ծրագրի՝ ջրային ռեսուրսների սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի ու էկոլոգիական նվազագույն էլքերի և կետաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական ու քանակական չափանիշների հաստատում,
- ժզ. մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառում և չափաքանակների սահմանում,
- ժէ. իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության հողային հաշվեկշռի նախագծի վերաբերյալ առաջարկությունների և կարծիքի տրամադրում,
- ժը. վտանգավոր արդյունաբերական օբյեկտների «Անվտանգության վկայագրեր» նախագծերի փորձաքննական եզրակացությունների տրամադրում,
- ժթ. Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող, օգտագործվող քիմիական նյութերի և առաջացող արտադրական ու սպառման թափոնների ըստ վտանգավորության աստիճանի դասակարգում,
- ի. թափոնների պետական հաշվառում, պետական կադաստրի, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծում, վարման կարգերի սահմանում,

իա. նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացում և հասարակայնության հետ կապերի կազմակերպում,

իբ. օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը մասնակցություն, Արցախի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման ապահովում բնապահպանության բնագավառում, միջգերատեսչական պայմանագրերի մշակում և կնքում,

իգ. բնապահպանության ոլորտում միջազգային նախագծերի մշակում ու նախարարության ներկայացված միջազգային ծրագրերի նախագծերի ուսումնասիրում և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրում,

իդ. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատում և դրա վերաբերյալ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունների տրամադրում.

2) ընդերքի ոլորտում՝

ա. ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ու պահպանության պետական հայեցակարգերի, ծրագրերի մշակում և իրականացում,

բ. ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, պետական կառավարումը և վերահսկողությունն ապահովող նորմատիվ ակտերի, ինչպես նաև ընդերքի օգտագործման համար նորմերի, կանոնների ու կարգերի մշակում և ընդունում,

գ. ընդերքի պաշարների օգտագործման և վերարտադրության տնտեսական մեխանիզմների մշակում ու ներդրում,

դ. ընդերքի պաշարների տնտեսական գնահատման ու հաստատման ապահովում,

ե. Արցախի Հանրապետության ընդերքի պաշարների միասնական ֆոնդերի (ընդերքի և ընդերքի պաշարների մասին երկրաբանական և այլ տեղեկատվության կուտակում, պահպանում, օգտագործման տրամադրում և վերլուծություն) կառավարում,

զ. Արցախի Հանրապետության տարածքի երկրաբանական ուսումնասիրության և երկրաբանահետախուզական աշխատանքների պետական երկրաբանական փորձաքննության, երկրաբանատնտեսագիտական գնահատման, ընդերքի պաշարների հաստատման մեխանիզմների մշակում և դրանց ապահովման իրականացում,

է. ընդերքի պաշարների միասնական հանրապետական ֆոնդերի՝ հաշվեկշիռների, կադաստրների ու ռեգիստրների վարում,

ը. ընդերքի պաշարների, ընդերքօգտագործման պետական երկրաբանամարկշեյդերական վերահսկողության ապահովում,

թ. օգտակար հանածոների պաշարների հաշվեկշռի կազմում, օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարում և հաշվառում,

ժ. երկրաբանական ուսումնասիրության և երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալների ավելացման, պետական գրանցման ապահովում, լեռնային աշխատանքների կատարման թույլտվությունների տրամադրում,

ժա. ընդերքի մասին երկրաբանական տեղեկատվության կուտակում, պահպանում և օգտագործման տրամադրում,

ժբ. սահմանված կարգով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրում, ուժը կորցրած ճանաչում և չեղյալ հայտարարում,

ժգ. ընդերքօգտագործման բնագավառում բնության և շրջակա միջավայրի պահպանության նորմերի, պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացում,

ժդ. ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի, հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա փորձաքննության իրականացում,

ժե. բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում բնության և շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումների պլանի կամ ծրագրի հաստատում,

ժգ. ընդերքի օգտագործման հետ կապված՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառում,

ժէ. հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի, ծրագրերի կատարման նկատմամբ բնապահպանական վերահսկողության իրականացում,

ժը. բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունում,

ժթ. երկրաբանական ուսումնասիրության ծրագրերի վերաբերյալ բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման եզրակացությունների տրամադրում,

ի. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացում:

IV. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարը (այսուհետ՝ նախարար) գլխավորում է նախարարությունը և կառավարում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը: Նախարարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը: Նախարարն ունի տեղակալ (տեղակալներ), որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

11. Նախարարն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի գնահատման և վերլուծության, հեռանկարային զարգացման ապահովման համար:

12. Նախարարը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

13. Նախարարը

1) իր իրավասության սահմաններում ընդունում և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

2) ղեկավարում, համակարգում և վերահսկում է նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված գործունեության բնագավառների, նպատակների և խնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության Նախագահին և Արցախի Հանրապետության կառավարություն:

4) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ղեկավարում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարության համակարգի աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

5) իրականացնում է նախարարության աշխատակազմի կառավարումը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում:

6) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները:

7) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները:

8) լսում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության պետական մարմինների տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները:

9) վերահսկողություն է իրականացնում նախարարության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ:

10) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը:

Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքները:

11) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի աշխատողների թիվը:

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շնորհում է դասային աստիճաններ, հատուկ կոչումներ:

13) կարող է կազմավորել աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ:

14) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

15) տրամադրում է արձակուրդ նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգի համաձայն:

16) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

14. Նախարարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալներից մեկը:

15. Նախարարի տեղակալը՝

1) համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառում:

2) իր լիազորությունների սահմաններում համակարգում է նախարարության իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ նախարարության համակարգի

պետական մարմինների և նախարարության կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջոցով տալով ցուցումներ և հանձնարարականներ.

3) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմիններին տալիս է հանձնարարականներ և առաջադրանքներ, վերահսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ.

4) նախարարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

5) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունների և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծության հետ կապված աշխատանքները.

6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

7) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին.

8) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

16. Նախարարը կարող է ունենալ խորհրդական և օգնական, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:

V. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

17. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարության (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների և տեսչությունների)՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

18. Նախարարության աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

19. Նախարարության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Նախարարության աշխատակազմը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

20. Նախարարության աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է նախարարության Արցախի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

Նախարարության աշխատակազմն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

21. Նախարարության աշխատակազմն իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

22. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

23. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

24. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

26. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմ:

27. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փողոց, N 1, կառավարության շենք:

VI. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

28. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է դրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

29. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

30. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

VII. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31. Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են դրա կառուցվածքային ստորաբաժանումները (բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ):

32. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

33. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

34. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման, վերահսկողական գործառնություններ իրականացնող և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

35. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառնություններ կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

37. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

VIII. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

38. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունը և նախարարը՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝

39. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները:

2) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը:

3) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը:

4) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

40. Նախարարության աշխատակազմի ղեկավարն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, նախարարի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, նախարարի հրամանների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

41. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

42. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

43. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից մեկը՝ նախարարի հրամանով:

44. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող,

տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով, հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասությունների սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին և տեխնիկական սպասարկումն ապահովող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

5) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.

6) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

7) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

8) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

9) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

10) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

11) նախարարի ստորագրմանն է ներկայացնում նախարարի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները.

12) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

13) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

14) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

45. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ֆինանսական ու հաշվապահական ծառայությունները, գործում է նախարարության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Արցախի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

46. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

IX. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

47. Նախարարության աշխատակազմն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական, ինչպես նաև վարչական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

48. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի)՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**X. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

49. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱԶԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

I. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Բնական ռեսուրսների կառավարման և բնապահպանության քաղաքականության բաժին
2. Իրավաբանական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
3. Ֆինանսատնտեսական բաժին
4. Քարտուղարություն

II. ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն
2. Բնապահպանական և ընդերքի պետական տեսչություն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 168-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 733 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն ստեղծելու, գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 733 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄԹՆՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առանձին դեպքերում, մատուցում է ծառայություններ կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների կառավարման, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման և ընդերքաբանական փորձաքննության, ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա), թափոնների և արտանետումների և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կառավարման բնագավառում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Գործակալությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Գործակալությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը, նախարարի ներկայացմամբ, հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Գործակալության լիազորությունները սահմանվում են օրենքով, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

5. Գործակալությունն, իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Գործակալությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Գործակալությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով նախարարության անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Գործակալության գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Առաքելյան փողոց, N 14գ:

II. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Գործակալության նպատակներն ու խնդիրներն են՝

1) կենսառեսուրսների կառավարման ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, ներառյալ անտառների, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովումը, ինչպես նաև այդ ոլորտներում պետական քաղաքականության ձևավորմանն ու կառավարմանն աջակցությունը,

բ. էկոհամակարգերի բազմազանության ու դրանց կենսառեսուրսների պահպանության ու վերարտադրության ապահովումը,

գ. բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառման, գույքագրման, տեղեկատվական բանկի ու կենսառեսուրսների կադաստրների ստեղծման ու վարման իրականացման ապահովումը,

դ. կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ստեղծման ու իրականացման ապահովումը,

ե. կենդանական և բուսական բնական ռեսուրսների օգտագործման թույլատրելի չափաքանակների հաստատման համար հիմնավորումների ապահովումը,

զ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և կայուն օգտագործման աշխատանքների համակարգումը.

2) ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում՝

ա. ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման օրենսդրությամբ սահմանված պահանջների ապահովումը,

բ. ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելը,

գ. ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական ծրագրերի իրագործմանը նպաստելը,

դ. իր իրավասության սահմաններում ընդերքօգտագործման ոլորտում պետական նորավորման իրականացման ապահովումը.

3) ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության ջրային ռեսուրսների պահպանության ու արդյունավետ օգտագործման նպատակով քաղցրահամ և ստորերկրյա ջրային ռեսուրսների քաղաքականության ձևավորումն ու կառավարումը,

բ. Արցախի Հանրապետության ջրի ազգային պաշարի ապահովման ու ավելացման միջոցառումների իրականացման ապահովումը,

գ. Արցախի Հանրապետության օգտագործելի ջրերի քանակի և որակի նախնական գնահատման, բնակչության ու տնտեսության ներկայի և ապագայի ջրի պահանջարկի ուրվագծման ապահովումը,

դ. Արցախի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի նախապատրաստման աշխատանքների կատարման ապահովումը,

ե. ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի շրջանակներում ջրային ռեսուրսների կառավարմանն ու պահպանությանն աջակցելը,

զ. ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության բնագավառում գիտատեխնիկական հիմնարար ու կիրառական հետազոտությունների կատարման և արդյունքների ներդրման ապահովումը,

է. ջրային ռեսուրսների որակական և քանակական մշտադիտարկման (մոնիթորինգի) պահանջարկի ձևավորման ապահովումը,

ը. պետական ջրային կադաստրի վարման և ջրային հաշվեկշռի կազմման ապահովումը,

թ. ջրավազանային կառավարման պլանների մշակման ապահովումը.

4) թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման ոլորտում՝

ա. թափոնների գործածության արդյունքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցման ապահովումը,

բ. թափոնների անդրսահմանային փոխադրումների ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխարգելման ապահովումը,

գ. օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների նորմավորման ապահովումը.

5) հողերի պահպանության ոլորտում՝

ա. հողերի բերրիության, ինչպես նաև հողի այլ օգտակար հատկությունների պահպանում, բարելավում և արդյունավետ օգտագործումը,

բ. խախտված հողերի վերականգնումը, դրանք տնտեսական շրջանառության մեջ ներառումը,

գ. հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանումը,

դ. բնապահպանական միջոցառումների, բնության հուշարձանների, արգելավայրերի, կանաչապատ գոտիների օգտագործմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

6) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ոլորտում՝

ա. շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսում, կանխարգելում, նվազեցում կամ բացառումը,

բ. էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների հիման վրա կայուն զարգացմանը նպաստելը,

գ. հիմնադրությային փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության դրական ազդեցությունների պահպանման, վնասակար ազդեցությունների ու դրանց հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ բացառման ապահովումը,

դ. արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովումը:

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

9. Գործակալությունն իր նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) կենսառեսուրսների կառավարման ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտների, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների, դենդրոպարկերի, անտառապարկերի կենսաբանական բազմազանության հաշվառման, տեղեկատվական բանկի ստեղծման պատվերի տեղադրում,

բ. Արցախի Հանրապետության վայրի բուսական և կենդանական պաշարների գույքագրում և մոնիթորինգ, տեղեկատվական բանկի ու կադաստրների վարում,

գ. բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների կայուն օգտագործման, վերականգնման, վերարտադրության և ուսումնասիրությունների վերաբերյալ պատվերի տեղադրում,

դ. Արցախի Հանրապետության բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի վարում,

ե. բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում և անտառապարկերում հողային ռեսուրսների և կանաչ տարածքների վերաբերյալ առաջարկությունների և կարծիքների տրամադրում,

զ. բնական էկոհամակարգերում, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի, ռեկրեացիոն և տնտեսական գործունեության զարգացման նպատակով պատվերի տեղադրում,

է. օտարածին բուսական և կենդանական տեսակներից ու կենդանի վերափոխված օրգանիզմներից կենսաբազմազանության անվտանգությունն ապահովող աշխատանքների կազմակերպում,

ը. Արցախի Հանրապետության վայրի բուսական և կենդանական պաշարների, բնության հատուկ պահպանվող տարածքների գույքագրում, մոնիթորինգ, տեղեկատվական բանկի ստեղծում ու կադաստրների վարում,

թ. Արցախի Հանրապետության կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրերի կնքում, բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման լիցենզիաների (թույլտվությունների) ձևակերպում և պայմանագրերի կնքում.

2) օգտակար հանածոների պաշարների և ընդերքի տրամադրման ոլորտում՝

ա. ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթին ներկայացվող՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության, փաթեթների ամբողջականության ստուգում և դիմումի գրանցման մասին դիմումատուին ծանուցում,

բ. նախարարությանը համաձայնեցման ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի քննարկում և համաձայնեցման մասին առաջարկության ներկայացում նախարարին,

գ. նախարարությանը համաձայնեցման ներկայացված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների քննարկում և համաձայնեցման մասին առաջարկության ներկայացում նախարարին,

դ. օգտակար հանածոների արդյունահանման նախագծերի, դրանց փոփոխությունների քննարկում,

ե. ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի և նրանց փոփոխությունների սահմանված կարգով ներկայացում օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման,

զ. օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայության դեպքում ընդերքօգտագործման իրավունք հայցող դիմումի մերժման մասին առաջարկության ներկայացում նախարարին,

է. ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտում և առաջարկության ներկայացում նախարարին,

ը. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումին կից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների ընդունում և վերլուծությունների կատարում և առաջարկության ներկայացում նախարարին,

թ. ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման վերաբերյալ առաջարկության ներկայացում նախարարին,

ժ. ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքի տեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման մասին առաջարկության ներկայացում նախարարին,

ժա. ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանի վարում և տեղեկատվության տրամադրում,

ժբ. ընդերքօգտագործողին գրավոր զգուշացում տալու և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ առաջարկության ներկայացում նախարարին,

ժգ. ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող՝ կատարված երկրաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ միջանկյալ հաշվետվությունների, օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում պաշարների շարժի տարեկան

հաշվետվությունների հիման վրա վերլուծության իրականացում, ամփոփում և ըստ արդյունքների առաջարկությունների ներկայացում նախարարին,

ժդ. ընդերքօգտագործողից պահանջելու ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը երեք ամսվա ընթացքում հանձնել լիազոր մարմնին,

ժե. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման պետական պատվերի ձևավորման և տեղադրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում նախարարին,

ժզ. ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառման մասին առաջարկության ներկայացում նախարարին,

ժե. ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, պետական կառավարումը և վերահսկողությունն ապահովող նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ընդերքի օգտագործման համար պահանջվող նորմերի ու կանոնների մշակում,

ժը. երկրաբանական տեղեկության արժանահավատության գնահատում, օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատեսագիտական գնահատման և վերագնահատման նյութերի փորձաքննություն՝ համապատասխան կոնդիցիաների պարամետրերի հաստատմամբ,

ժթ. օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների գնահատման ու վերագնահատման արդյունքներով պաշարների հաշվարկման նյութերի փորձաքննություն՝ այդ պաշարների հաստատմամբ կամ վերահաստատմամբ,

ի. արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման նյութերի փորձաքննություն՝ համապատասխան եզրակացությունների տրամադրմամբ.

3) ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում՝

ա. ջրավազանային կառավարման պլանների մշակման և դրանց իրականացման ապահովում,

բ. ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում,

գ. ջրօգտագործման թույլտվությամբ տրված իրավունքի՝ այլ անձանց փոխանցման ձևակերպում,

դ. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործողին ջրօգտագործման թույլտվության ստացման պահանջից ազատում,

ե. ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման առաջադրանքի ձևավորումը և դրանց մասին հաշվետվությունների գրանցում,

զ. պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցումը և տեղեկատվության տրամադրում,

է. ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում ջրի կորուստների չափաքանակների՝ սահմանված կարգով համաձայնեցում,

ը. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր կողմից մշակված փաստաթղթերի մասին հասարակությանը ծանուցման կազմակերպում,

թ. ջրակեղևամակարգերի պահպանման գոտիների քարտեզների մշակման պատվերների տեղադրում,

ժ. ջրօգտագործողների կողմից ջրօգտագործման թույլտվության պահանջների խախտման դեպքում՝ ջրօգտագործման թույլտվության կասեցումը, փոփոխումը կամ չեղյալ համարում,

ժա. ջրային ռեսուրսների մոնիթորինգի պատվերի տեղադրում.

4) թափոնների և մթնոլորտ արտանետումների ոլորտում՝

ա. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար թափոնների տեղադրման սահմանաքանակների հաստատում,

բ. թափոնների պետական կադաստրի, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման ռեսուրսների վարում,

գ. թափոններ առաջացնողների կազմած՝ թափոնների անձնագրերի համաձայնեցում,

դ. նախարարին վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրումների թույլտվությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

ե. օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման (ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման) թույլտվությունների տրամադրում,

զ. մթնոլորտ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նախագծերի քննարկում և մթնոլորտ արտանետման թույլտվությունների տրամադրում.

5) հողերի պահպանության ոլորտում՝

ա. սահմանված կարգով Արցախի Հանրապետությունում հողի բերրի շերտի օգտագործման մասին տվյալների և տեղեկությունների հավաքագրում և ամփոփում,

բ. իր իրավասության սահմաններում հատուկ պահպանվող տարածքների հողամասերի սահմանների ճշգրտմանը մասնակցելը և բնապահպանական նշանակության հողերի օգտագործման, նրանց վիճակի, այդ թվում՝ աղտոտվածության պետական հաշվառման և վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կազմակերպում,

գ. հողօգտագործման, հողերի աղտոտման և հողերի վրա այլ վնասակար ներգործությունների բնապահպանական նորմերի սահմանման սկզբունքներին համապատասխան նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակում և տեխնիկական առաջադրանքների կազմում.

6) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ոլորտում՝

ա. հիմնադրույթային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության ազդեցության գնահատումների իրականացում կամ կազմակերպում, փորձաքննության իրականացում, փորձաքննական եզրակացության կազմում ու տրամադրում,

բ. հիմնադրույթային փաստաթղթի կամ գործունեության փորձաքննության գործընթացում, պայմանագրային հիմունքներով, փորձագետների ներգրավում,

գ. փորձաքննության գործընթացում հանրության ծանուցման և մասնակցության հնարավորության ապահովում.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացում:

IV. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Գործակալությունը կառավարում է նախարարը: Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որին, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթում սահմանված կարգով հաղթող ճանաչվելուց հետո, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը: Իր գործունեության ընթացքում գործակալության պետն առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

11. Գործակալության պետը պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների և գործառույթների պատշաճ կատարման համար, ինչպես նաև դրանց՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

12. Գործակալության պետը հաշվետու է նախարարին և նրա տեղակալներին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին:

13. Գործակալության պետը՝

1) ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը.

2) նախարարին կամ նրա տեղակալին ներկայացնում է առաջարկություններ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների և խնդիրների վերաբերյալ:

3) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության և գործակալության անունից, ինչպես նաև տալիս է գործակալության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

4) ի պաշտոնե նախագահում է նախարարի հրամանով կազմավորվող Արցախի Հանրապետության պետական բնապահպանական և ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովների լիազումար նիստը:

5) իր իրավասության սահմաններում գործակալության աշխատողներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է առաջարկություններ այդ աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

6) նախարարին կամ նրա տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

7) ապահովում է նախարարի հրամանների և ցուցումների, ինչպես նաև նախարարի տեղակալի ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին կամ նրա տեղակալին:

8) նախարարության և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները:

9) լսում է գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները:

10) իրականացնում է վերահսկողություն գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

11) նախարարին ներկայացնում է առաջարկություններ գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև գործակալությունում խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ:

12) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

13) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

14. Գործակալության պետի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում այդ պաշտոնը զբաղեցվում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

V. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարության և սույն կանոնադրություններով գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

16. Գործակալության պետի ներկայացմամբ նախարարի հրամանով գործակալությունում ստեղծվում և գործում են պետական բնապահպանական և ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովներ, որոնք գործում են նախարարի կողմից հաստատված կանոնակարգերով:

17. Գործակալությունը պատասխանատվություն է կրում միայն ներկայացված նյութերի հիման վրա իր կողմից ընդունված որոշումների հավաստիության և արժանահավատության համար:

18. Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

19. Գործակալության վերակազմակերպման ու նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների կառավարման բաժին
2. Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման բաժին
3. Ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժին

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 169-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 20-Ի N 822-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը վերանվանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 734 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառնություններ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Տեսչությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը գործում է համաձայն իր կանոնադրության, որն Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի (այսուհետ՝ նախարար) ներկայացմամբ հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» Արցախի Հանրապետության օրենքով, Ընդերքի մասին Արցախի Հանրապետության օրենսգրքով և Արցախի Հանրապետության այլ օրենքներով:

4. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, սույն կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Տեսչությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Տեսչությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և տեսչության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ: Տեսչությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով նախարարության անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Տեսչության գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Առաքելյան փողոց, N 14գ:

II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Տեսչության նպատակները և խնդիրներն են՝

- 1) շրջակա միջավայրի պահպանումը և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը.
- 2) բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և այդ ոլորտներում Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
- 3) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բնական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը.
- 4) երկրաբանական լիակատար և համալիր ուսումնասիրության հիման վրա ընդերքի կառուցվածքի, դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ապահովումը:

III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Տեսչությունն իր նպատակները և խնդիրներն իրականացնելու համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում հետևյալ ուղղություններով՝

1) մթնոլորտային օդի պահպանություն՝

ա. անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունների առկայության և այդ թույլտվություններով սահմանված նորմատիվների պահպանում,

բ. մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների ու պահանջների պահպանում,

գ. մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության նորմերի ու պահանջների պահպանում,

դ. մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների մաքրման և հսկողության համար տեղակայված կառույցների ու սարքավորումների առկայության և դրանց կառուցման ու շահագործման ընթացքում մթնոլորտային օդի պահպանության պահանջների ու կանոնների պահպանում,

ե. տրանսպորտային միջոցների, ինքնաթիռների, նավերի և այլ փոխադրամիջոցների ու կայանքների շահագործման ընթացքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի համար սահմանված նորմատիվների, պահանջների ու չափման կարգերի պահպանում,

զ. բնակավայրերում արտադրական, սպառման թափոնների և մթնոլորտը փոշիով, վնասակար գազերով ու գարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող թափոնների պահեստավորման կամ դրանց այրման սահմանափակումների, պահանջների պահպանում,

է. մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառման վարման կանոնների կատարում,

ը. նոր օբյեկտների կառուցման, գործող օբյեկտի վերազինման, գոյություն ունեցող տեխնոլոգիական գործընթացների, սարքավորումների կատարելագործման ու ներդրման դեպքում մթնոլորտային օդի վիճակի վրա վնասակար ներգործության նորմատիվների ու պահանջների պահպանում,

թ. կառուցվող, վերակառուցվող ու քանդվող օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների համար սահմանված նորմատիվների ու պահանջների պահպանում,

ժ. բույսերի պաշտպանության միջոցների, հանքային պարարտանյութերի փոխադրման, պահման և կիրառման կանոնների պահպանում,

ժա. օգոնային շերտի պահպանության համար սահմանված սահմանափակումների և պահանջների պահպանում.

2) ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն՝

ա. ջրային ռեսուրսների ինքնակամ և ոչ նպատակային օգտագործման սահմանափակումների պահպանում,

բ. ջրօգտագործման թույլտվություն և ազատ ջրօգտագործում պահանջող ջրօգտագործման իրականացման պահանջների կատարում,

գ. սահմանված չափաքանակներից ավելի ջրային ռեսուրսներն աղտոտելու և ջրհավաք ավազաններում ջրային ռեժիմի սահմանափակումների պահպանում,

դ. ջրային ռեսուրսների պետական հաշվառման վարման կանոնների պահպանում,

ե. ջրային ռեսուրսների վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբյուրների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրման պահանջների կատարում,

զ. ջրային ռեսուրսների վիճակի վրա ազդող աշխատանքների կատարման համար սահմանված պահանջների կատարում,

է. հանգստի և սպորտի համար ջրային ռեսուրսներից օգտվելու սահմանված պահանջների կատարում,

ը. ջրի ազգային ծրագրով սահմանված ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նորմերի՝ չափաքանակների ու սահմանափակումների կատարում,

թ. ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման, ջրային էկոհամակարգերի պահպանման գոտիների (բացառությամբ համակարգերի սանիտարական պահպանության և անօտարելի գոտիների) պահանջների կատարում,

ժ. ջրային համակարգերում ջրակորուստների նորմատիվային չափաքանակների պահպանում,

ժա. ջրային ռեսուրսներից իրականացվող ջրառի թույլատրված ծավալների պահպանում.

3) հողերի օգտագործում և պահպանություն՝

ա. հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և սպառման թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանումը և բնապահպանական միջոցառումների կատարում,

բ. հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահման և օգտագործման պահանջների պահպանում,

գ. բնապահպանական՝ ներառյալ բնության հատուկ պահպանվող տարածքների, ընդերքօգտագործման համար տրամադրված հողերի, անտառային և ջրային հողերի օգտագործման համար սահմանված բնապահպանական սահմանափակումների ու նորմերի պահպանում,

դ. բնապահպանական, ջրային, անտառային ֆոնդի հողերի, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի նպատակային ու գործառնական նշանակության օգտագործման, ինչպես նաև այդ հողերի սանիտարական և պահպանական գոտիների (բացառությամբ ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիների) համար հողաշինարարական, անտառաշինական, քաղաքաշինական փաստաթղթերով և հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմաներով սահմանված նորմերի պահպանում.

4) ընդերքօգտագործում և պահպանություն՝

ա. երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքների, ինչպես նաև դրանց շահագործման համար սահմանված ընդերքօգտագործման պահանջների կատարում,

բ. ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքության, օգտակար հանածոների պաշարների

շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարում,

գ. ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան՝ ընդերքօգտագործման աշխատանքների կատարում,

դ. օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզում և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համալիր օգտագործման կամ դրանց պահեստավորում ու պահպանում,

ե. ընդերքօգտագործման պայմանագրի դրույթներին համապատասխան բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման պահանջների ու պայմանների ապահովում,

զ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի, տեղադիրքի և դրանց համայնքների բնակչության անվտանգության և առողջության մշտադիտարկումների իրականացման ապահովում,

է. ընդերքօգտագործման ընթացքում բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացում,

ը. ընդերքօգտագործման վերաբերյալ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարում,

թ. իր իրավասության սահմաններում հանքի փակման աշխատանքները հանքի փակման ծրագրին համապատասխան իրականացում,

ժ. օգտակար հանածոների հանքավայրերի մակերեսների ինքնակամ կառուցապատման կանխում և այլ նպատակների համար այդ մակերեսների օգտագործման սահմանված կարգի պահպանում,

ժա. հրդեհումից, հեղեղումից և օգտակար հանածոների որակն ու հանքավայրերի արդյունաբերական արժեքը նվազեցնող կամ դրանց շահագործումը բարդացնող այլ գործոններից օգտակար հանածոների հանքավայրերի պահպանում,

ժբ. փորձաքննության ենթարկված փաստաթղթերով ամրագրված ընդերքօգտագործման պահանջների ու միջոցառումների ապահովում,

ժգ. ընդերքօգտագործման վճար վճարողների հաշվառման կարգի պահանջների ապահովում,

ժդ. ընդերքօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների, վճարների հաշվարկման և հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման կարգի ապահովում,

ժե. ընդերքօգտագործման վարչական վիճակագրության վարման և ներկայացման կարգի ապահովում, որը բացառում է ընդերքի օգտագործման և պահպանության վերահսկողության համալիր իրականացման հնարավորությունը,

ժզ. հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի, ծրագրերի կատարման ապահովում.

5) կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն՝

ա. կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության համար սահմանված պահանջների կատարում,

բ. վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ Արցախի Հանրապետությունից արտահանման, Արցախի Հանրապետություն դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպանում,

գ. Արցախի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի, ինչպես նաև բուսական համակեցությունների պահպանության համար սահմանված պահանջների կատարում,

դ. կենդանական աշխարհի օբյեկտների վերաբնակեցման, կլիմայավարժեցման և սելեկցիոն նպատակով դրանց օգտագործման համար սահմանված պահանջների պահպանում,

ե. բուսական աշխարհի օբյեկտների կլիմայավարժեցման և սելեկցիոն նպատակներով դրանց օգտագործման համար սահմանված պահանջների պահպանում,

զ. ժամանակակից կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի վերափոխված օրգանիզմների օգտագործման պահանջների պահպանում,

է. բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերի, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտների բնակության միջավայրի, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների պահպանության համար սահմանված պահանջների պահպանում,

ը. բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների՝ գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման պահանջների պահպանում,

թ. վայրի կենդանիների որսի և ձկնորսության կանոնների պահպանում,

ժ. բնության հատուկ պահպանվող տարածքների համար սահմանված ռեժիմների պահպանության պահանջների կատարում, ընդհանուր օգտագործման տարածքներում՝ ծառերի, թփերի, զբոսայգիների և այլ կանաչ գոտիների պահպանման համար սահմանված պահանջների կատարում,

ծա. անտառներում ծառերի, թփերի, մատղաշի և մշակաբույսերի պահպանման, ծառերի ու թփերի հատման կանոնների պահպանում,

ծբ. անտառներն արտադրական և կենցաղային կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, քիմիական նյութերով և թափոններով աղտոտումը կանխարգելող սահմանափակումների պահպանում,

ծգ. անտառային ֆոնդի տարածքներում խոտհնձի, անասունների արածեցման, խոտհարքների և արոտահանդակների օգտագործման կանոնների պահպանում,

ծդ. անտառաշինական փաստաթղթերին համապատասխան անտառավերականգնման և այլ աշխատանքների կատարում.

6) վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ՝

ա. վտանգավոր նյութերն ու թափոնները Արցախի Հանրապետությունից արտահանման, Արցախի Հանրապետություն դրանց ներմուծման և Արցախի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման համար սահմանված պահանջների պահպանում,

բ. թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նորմերի պահանջների կատարում,

գ. թափոնների տեղադրման նորմատիվային պահանջների կատարում,

դ. թափոնների անձնագրավորման և ռեեստրի վարման կարգի պահանջների կատարում,

ե. թափոնների պետական հաշվառման վարման կանոնների կատարում.

7) բնապահպանական պետական փորձաքննություն՝

ա. փորձաքննության ենթարկված փաստաթղթերով ամրագրված պահանջների ու միջոցառումների ապահովում և կատարում.

8) բնապահպանական և բնօգտագործման վճարներ՝

ա. բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների հաշվառման կարգի պահանջների պահպանում,

բ. բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների և վճարների հաշվարկման կարգի պահպանում.

9) վարչական վիճակագրություն՝

ա. բնապահպանական և բնօգտագործման վարչական վիճակագրության վարման և հաշվետվությունների ներկայացման կարգի պահպանում:

10. Տեսչությունը բնապահպանական վերահսկողությունն իրականացնում է նաև բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

11. Բնապահպանական պետական տեսչական ստուգումների գործերի վարույթի ընթացքում բնապահպանական պետական տեսուչներն օրենքով սահմանված կարգով

իրականացնում են քննություն և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կայացնում որոշումներ:

12. Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բնապահպանական պետական տեսուչներն իրականացնում են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ:

13. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ղեկավարում բնապահպանական պետական տեսուչները դադարեցնում, կասեցնում և արգելում են իրավախախտում թույլ տված անձանց գործողությունները:

14. Տեսչության պետական տեսուչներին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ղեկավարում և կարգով թույլատրվում է պահել, կրել և օգտագործել ծառայողական զենք:

15. Տեսչությունը սահմանված կարգով մասնակցում է տեսչական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ օրենսդրական և նորմատիվ ակտերի, մեթոդական հրահանգների և ցուցումների մշակմանը, բնապահպանական տեսչական աշխատանքների ոլորտում միջազգային պայմանագրերից բխող՝ Արցախի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

IV. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Տեսչությունը կառավարում և նրա գործունեությունը համակարգում է նախարարը:

17. Տեսչության ղեկավարումն իրականացնում է տեսչության պետը, որը միաժամանակ Արցախի Հանրապետության բնապահպանական գլխավոր տեսուչն է:

Իր գործունեության ընթացքում տեսչության պետն առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

18. Տեսչության պետը պատասխանատու է տեսչության կողմից վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց՝ Արցախի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

19. Տեսչության պետը հաշվետու է նախարարին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ղեկավարում՝ նախարարության աշխատակազմի ղեկավարին:

20. Տեսչության պետը՝

1) պատասխանատու է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտներում վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

2) ղեկավարում, համակարգում և վերահսկում է տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

3) նախարարին ներկայացնում է առաջարկություններ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների և խնդիրների վերաբերյալ:

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության և տեսչության անունից, ինչպես նաև տալիս է տեսչության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

5) իր իրավասության սահմաններում նախարարության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ տեսչության աշխատողների

նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

6) պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

7) ապահովում է նախարարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին:

8) նախարարության կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների իրավասությունները:

9) վերահսկողություն է իրականացնում տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

10) նախարարին ներկայացնում է առաջարկություններ տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև տեսչության խորհրդակցական մարմին ստեղծելու վերաբերյալ:

11) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

12) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

V. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

22. Տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

23. Տեսչության վերակազմակերպման և նրա գործունեության դադարեցման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 17-ի N 169-Ն որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժին
2. Կենսաբազմազանության և ջրերի մթնոլորտի վերահսկողության բաժին

II. Տարածքային ստորաբաժանումներ

1. Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանում
2. Ասկերանի տարածքային ստորաբաժանում
3. Մարտունու տարածքային ստորաբաժանում
4. Մարտակերտի տարածքային ստորաբաժանում
5. Հադրութի տարածքային ստորաբաժանում
6. Շուշիի տարածքային ստորաբաժանում
7. Շահումյանի տարածքային ստորաբաժանում
8. Քաշաթաղի տարածքային ստորաբաժանում

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 170-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 24-Ի N 162-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՃԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ա ղ ա շ ա մ է***:

1. Արցախի Հանրապետությունում ավիացիայի (բացառությամբ ռազմականի) և օդային տրանսպորտի բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչել Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու մասին» N 162-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 171-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն և ՆՀ-107-Ն հրամանագրերին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առնչում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց աշխատանքային ստաժը սահմանող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 522-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում, որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի» բառերը.

3) որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետից հանել «փախստականների հարցերով իրավասու մարմնից՝ պահանջվող տվյալներով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 173-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 101 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ և 76-րդ հոդվածներին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի «Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգը հաստատելու մասին» N 101 որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 3.9.1-ին կետում.

ա. «ԼՂՀ քաղաքաշինության նախարարությունը ապահովում է» բառերը փոխարինել «մասնագիտացված կազմակերպության կողմից իրականացվում է» բառերով,

բ. հանել «և դրանք հաստատված տրամադրում է Հիմնադրամին» բառերը.

2) 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. վարկի առավելագույն տարեկան տոկոսադրույքը չի գերազանցում՝

- գնման կամ կառուցման համար՝ արտարժույթով հիփոթեքային վարկի տրամադրման դեպքում՝ 12%-ը, իսկ ՀՀ դրամով հիփոթեքային վարկի տրամադրման դեպքում՝ 15%-ը.

- վերանորոգման համար՝ 15%-ը.

Հիփոթեքային վարկը կարող է տրամադրվել նաև փոփոխական տոկոսադրույքով, որի դեպքում՝

ա. գործակալ բանկի հետ կնքված վարկային պայմանագրում նշվում են բոլոր այն պայմանները (այսուհետ՝ արտաքին գործոններ), որոնց փոփոխությամբ հիփոթեքային վարկի տոկոսադրույքը կարող է փոփոխվել,

բ. վարկային պայմանագրում պետք է նախատեսվի արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանավորված հիփոթեքային վարկի տոկոսադրույքի փոփոխման կարգը,

գ. հիփոթեքային վարկի տոկոսադրույքը վարկային պայմանագրի գործողության ողջ ընթացքում չի կարող գերազանցել սույն կետում նշված յուրաքանչյուր վարկատեսակի գծով նախատեսված առավելագույն շեմը.».

3) 4.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. վարկի ստացման համար կանխավճարը չի գերազանցում 20%-ը.

Քաղաքացին իր ցանկությամբ կարող է կատարել ավելի մեծ չափով կանխավճար:».

4) 4.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. վարկի ժամկետը՝

- գնման կամ կառուցման համար՝ առավելագույնը 25 տարի.

- վերանորոգման համար՝ առավելագույնը 10 տարի.».

5) 4.6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քաղաքացու վարկունակությունը հաշվարկելիս հաշվի է առնվում նրա և նրա ընտանիքի անդամների (և այլ անձանց) դրամական եկամուտներից քաղաքացու փաստացի վճարվելիք տոկոսադրույքի չափը, ինչպես նաև ընտանիքի յուրաքանչյուր անդամի կենսաապահովման համար անհրաժեշտ ամսական գումարը, որը մեկ շնչի հաշվով սահմանվում է ոչ ավելի, քան 50 000 ՀՀ դրամ: Հիփոթեքային վարկի փոփոխական տոկոսադրույքով տրամադրման դեպքում Քաղաքացու կողմից փաստացի վճարվելիք տոկոսադրույքի չափը հաշվարկելիս հաշվի է առնվում սույն կարգի 4.1-ին կետում նշված վարկի առավելագույն տոկոսադրույքը:».

6) 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված ընդհանուր պայմաններին համապատասխանող քաղաքացիներին բնակարան ձեռք բերելու նպատակով բանկերի կողմից տրվող հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման չափը սահմանվում է Գործակալ բանկի կողմից տրվող հիփոթեքային վարկի տարեկան տոկոսադրույքի և ստորև բերված սանդղակում նշված՝ վարկի գումարին համապատասխան Քաղաքացու սեփական միջոցների հաշվին վճարվող մասնաբաժնի տարբերության հաշվարկմամբ.

ա. մինչև 27 000 000 ՀՀ դրամը (ներառյալ)՝ վարկի տարեկան տոկոսադրույքի 50%-ի չափով,

բ. 27 000 000 ՀՀ դրամից մինչև 33 000 000 ՀՀ դրամը (ներառյալ)՝ վարկի տարեկան տոկոսադրույքի 60%-ի չափով,

գ. 33 000 000 ՀՀ դրամից մինչև 40 000 000 ՀՀ դրամը (ներառյալ)՝ վարկի տարեկան տոկոսադրույքի 70%-ի չափով,

դ. 40 000 000 ՀՀ դրամից մինչև 50 000 000 ՀՀ դրամը (ներառյալ)՝ վարկի տարեկան տոկոսադրույքի 80%-ի չափով.

Հիփոթեքային վարկերը արտարժույթով տրամադրելու դեպքում վարկերի մեծությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սուբսիդավորման երաշխավորագրի տրամադրման օրվա դրությամբ հրապարակված արտարժույթի փոխարժեքը:

Սկզբնական սուբսիդավորումը սահմանվում է 5 տարի ժամկետով՝ հետագայում պայմանների վերանայման հնարավորությամբ:

Սուբսիդավորման ընթացքում քաղաքացու կողմից հիփոթեքային վարկի 10% և ավելի չափով վաղաժամկետ մարում կատարելու դեպքում երաշխավորագրում նշված սուբսիդավորման չափը վերանայվում է սույն կետի սանդղակի համաձայն:».

7) 7.1¹-ին կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Հ/Հ	Արտարժույթով տրամադրված վարկի արժույթի փոխարժեքի նկատմամբ սուբսիդավորման ժամկետը լրանալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ տվյալ արժույթի միջին փոխարժեքի աճը /ՀՀ դրամ/	Վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման չափը
1.	100.1-ից ավելի	100%
2.	80.1-100.0 ներառյալ	90%
3.	60.1-80.0 ներառյալ	80%
4.	40.1-60.0 ներառյալ	70%
5.	20-40.0 ներառյալ	60%

8) 7.7-րդ կետի «Քաղաքացին եռամսյա ժամկետում» բառերը փոխարինել «ոչ շուտ, քան երեք ամսվա ընթացքում Քաղաքացին» բառերով.

9) 7.12-րդ կետի «կարող է կնքվել» բառերը փոխարինել «կնքվում է» բառերով.

10) 7.13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.13. Սույն կարգի 3-րդ կետով (բացառությամբ 3.6-րդ, 3.8-րդ և 3.9-րդ ենթակետերի) սահմանված պահանջներին համապատասխանող քաղաքացիներին բնակարան վերանորոգելու նպատակով բանկերի կողմից տրվող հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման չափը սահմանվում է Գործակալ բանկի կողմից տրվող հիփոթեքային վարկի տարեկան տոկոսադրույքի 50%-ի չափով:».

11) 9.1.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1.1¹-ին կետ.

«9.1.1¹. տեղեկանք ընտանեկան կարգավիճակի մասին.».

12) 9.1.9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1.9¹-ին կետ.

«9.1.9¹. տեղեկանք բնակելի տան կամ բնակարանի վերաբերյալ գրանցված սեփականության իրավունքի և վերջին հինգ տարում օտարված անշարժ գույքի (բնակելի տուն, բնակարան) մասին.».

13) 9.2.1-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.2.1¹-ին կետ.

«9.2.1¹. տեղեկանք ընտանեկան կարգավիճակի մասին.».

14) 9.3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.4-րդ կետ.

«9.4. Սուբսիդավորման ժամկետը լրանալուց հետո նոր ժամկետով սուբսիդավորման աջակցություն ստանալու նպատակով Քաղաքացին Հիմնադրամին ներկայացնում է Հայտ:

Հայտի հետ ներկայացվում են՝

9.4.1. Քաղաքացու և նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

9.4.2. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը.

9.4.3. տեղեկանք բնակելի տան կամ բնակարանի վերաբերյալ գրանցված սեփականության իրավունքի և վերջին հինգ տարում օտարված անշարժ գույքի (բնակելի տուն, բնակարան) մասին.

9.4.4. տեղեկանք բանկից հիփոթեքային վարկի գումարի մնացորդի մասին.

9.4.5. սույն կարգի այլ կետերով սահմանված դրույթների համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր:».

15) որոշմամբ հաստատված կարգի հավելված 2-ը և հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Չեղյալ ճանաչել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 101 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 642-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2017 թվականի նոյեմբերի 17-ի N 173-Ն որոշման

«Հավելված 2
հասցեատեր՝ /Գործակալ բանկի անվանումը,
կազմակերպաիրավական տեսակը,
ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը/
անհրաժեշտության դեպքում՝
/Քաղաքացու/Վարկառուի/ անունը, ազգանունը/

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ ԹԻՎ

ք.Ստեփանակերտ

/օր, ամիս, տարի/

Արցախի ներդրումային հիմնադրամը (այսուհետ՝ «Երաշխավոր») սույնով երաշխավորում է /նշվում է Քաղաքացու /Վարկառուի/ անունը, ազգանունը, անձնագրի տվյալները/ «Երաշխավոր»-ի Գործակալ բանկից /նշվում է ստացվելիք հիփոթեքային վարկի նպատակը, ժամկետը և/ ներքոնշյալ պայմաններով

	Չափանիշ	Պայման
1.	Վարկի արժույթը	ՀՀ դրամ/ արտարժույթ
2.	Վարկի առավելագույն տոկոսադրույքը	արտարժույթով վարկի տրամադրման դեպքում տարեկան 12%, ՀՀ դրամով վարկի տրամադրման դեպքում տարեկան 15%, /վերանորոգման դեպքում՝ մինչև 15%/
3.	Վարկի առավելագույն տևողությունը	25 տարի /վերանորոգման դեպքում՝ 10 տարի/
4.	Անհրաժեշտ կանխավճարի չափը	մինչև 20%-ը ներառյալ

հիփոթեքային վարկ ստանալու դեպքում սուբսիդավորել /նշվում է սուբսիդավորվող չափը/ Գործակալ բանկի և Վարկառուի միջև կնքված վարկային պայմանագրով նշված տոկոսադրույքի վճարման օրը՝ սահմանված պարբերականությամբ:

Սույն երաշխավորագիրն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և ուժը կորցրած է համարվում 90 օրացուցային օրվա ընթացքում՝ վարկային պայմանագրի չկնքման դեպքում:

«Երաշխավոր»-ը պարտավորվում է մինչև սահմանված ժամկետում վարկային պայմանագրի կնքումը երաշխավորագրի հետ պահանջելու դեպքում երաշխիքի դադարեցումից 3 օր առաջ գրավոր տեսքով ծանուցագիր ուղարկել սույն երաշխավորագրի հասցեատերին (հասցեատերերին)

Գլխավոր տնօրեն՝ _____ /ստորագրություն/ _____ /անուն, ազգանուն/

Ֆինանսահաշվային ծառայության պետ՝ _____ /ստորագրություն/ _____ /անուն, ազգանուն/

Կ.Տ.

Հավելված 6
 հասցեատեր՝ /Գործակալ բանկի անվանումը,
 կազմակերպչափրավական տեսակը,
 դեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը/
 անհրաժեշտության դեպքում՝
 /Քաղաքացու/Վարկառուի/ անունը, ազգանունը/

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ թիվ

ք.Ստեփանակերտ

/օր, ամիս, տարի/

Արցախի ներդրումային հիմնադրամը (այսուհետ՝ «Երաշխավոր») սույնով երաշխավորում է /նշվում է Քաղաքացու /Վարկառուի/ անունը, ազգանունը, անձնագրի տվյալները/ «Երաշխավոր»-ի Գործակալ բանկից /նշվում է ստացվելիք հիփոթեքային վարկի նպատակը և չափը/ ներքոնշյալ պայմաններով

	Չափանիշ	Պայման
1.	Վարկի արժույթը	ՀՀ դրամ
2.	Վարկի առավելագույն տոկոսադրույքը	արտարժույթով վարկի տրամադրման դեպքում տարեկան 12%, ՀՀ դրամով վարկի տրամադրման դեպքում տարեկան 15%
3.	Վարկի առավելագույն տևողությունը	25 տարի
4.	Անհրաժեշտ կանխավճարի չափը	մինչև 20%-ը ներառյալ

հիփոթեքային վարկ ստանալու դեպքում Քաղաքացուն տրամադրել /նշվում է գումարի չափը/ նպատակային փոխառություն՝ միանվագ վճարում կատարելով Գործակալ բանկի /նշվում է համապատասխան հաշվի համարը/ վարկային պայմանագրի կնքումից 3 աշխատանքային օր առաջ:

Սույն երաշխավորագիրն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և ուժը կորցրած է համարվում 90 օրացուցային օրվա ընթացքում՝ վարկային պայմանագրի չկնքման դեպքում:

«Երաշխավոր»-ը պարտավորվում է մինչև սահմանված ժամկետում վարկային պայմանագրի կնքումը երաշխավորագրի հետ պահանջելու դեպքում երաշխիքի դադարեցումից 3 օր առաջ գրավոր տեսքով ծանուցագիր ուղարկել սույն երաշխավորագրի հասցեատերին (հասցեատերերին):

Գլխավոր տնօրեն՝ _____
 /ստորագրություն/ _____ /անուն, ազգանուն/

Ֆինանսահաշվային
 ծառայության պետ՝ _____
 /ստորագրություն/ _____ /անուն, ազգանուն/

Կ.Տ. »:

**ԱՐՑՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 174-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 289 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Լիազոր մարմին ճանաչելու մասին» N 289 որոշման մեջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2017թ.

N 175-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 25-Ի N 128 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) 3-րդ ենթակետից հանել «, 16¹-ին բաժնի 1-ին և 2-րդ կետերով, 16.2-րդ բաժնի 1-ին և 2-րդ կետերով» բառերը.

2) լրացնել 6.1-ին ենթակետ հետևյալ խմբագրությամբ.

«6.1) Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը՝ աղյուսակի 16¹-ին բաժնի 1-ին և 2-րդ կետերով, 16.2-րդ բաժնի 1-ին և 2-րդ կետերով.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ